Ynlinh mypnipynh
pbunpnh hnqhp pypnyp
yhbuppl hnynq hnp hnpp-
qhnlp h pbunnpnpn:

Ltn
1528

1999

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ԹԵՄԱԿԱՆ ՀՈՎՎԵՎՈՒԹԻՒՆՔԻ

ՎԻՃԱԿԻՆ ՀԱՅՈՑ

ԱՌՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԵՒ ԲԵՍՍԱՐԱԲԻՈՑ

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆ

Ի Տպարանի Սերովբէի Յարութիւնեան

1882.

Հ Ա Յ Ա Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն

Լեռ
1528

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ԹԵՄԱԿԱՆ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐԱՆՈՑԻ

ՎԻՃԱԿԻՆ ՀԱՅՈՑ

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԵՒ ԲԵՍԱՐԱԲԻՈՑ·

524



ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆ
Ի Տպարանի Սերովբէի Յարութիւնեան
1882.

Дозволено Правительствомъ.

38. 1533

9 1528. 60

ԵՐԱԽՏԻՏԵԼԻՔ

Երբ Նախիջևանի և Ռուսաստանի Թուրքական Դպրանոցի կանոնագրությունն ի լոյս ընծայելով, Հոգաբարձական Խորհրդարանը հարկաւոր կհամարի հրատարակել նաև ի դիտութիւն մերազնէից հետևեալ տեղեկութիւնները՝ իբրև նախադիտելիք, թէ ինչ հանգամանքներ պատճառ եղած էին Դպրանոցին սկզբնաւորութեանն ու նորա Նոր Նախիջևան քաղաքի մէջ բացուելոյն, քաղեալ տեսչի պաշտօնակատարի ճառէն, որ կարդացուեցաւ Դպրանոցի բացման և օրհնութեան հանդիսին, յ8 Նոյեմբերի 1881 ամի։

Մի ազգային բարեկարգ ուսումնարանի կարևորութեան ճանաչողութիւնն ու առ այն ձգտելը նոր չէ Նոր Նախիջևան քաղաքիս մէջ։ Ով ծանօթ է փոքր ի շատ քաղաքի գործերուն, նա գիտէ, որ մեր քաղաքի հայ հասարակութիւնը Նախիջևան քաղաքիս հիմնարկութեան օրէն միշտ ճանաչած է դորա անհրաժեշտ լինելը մեր մէջ և կրբէք դպրած չէ հետևիլէ, որ ի դլուխ բերէ իւր բարի դիտաւորութիւնը։ Յայտնի է որ մեր նախնիք շատ փորձեր արած են հիմնել քաղաքիս մէջ մի ազգային վարժարան, խնայած չեն դորա համար ոչ մի զոհաբերութիւն, մինչև հեռու քաղաքներէն բերել տուած են բանիբուն և հռչակաւոր վարժապետներ՝ ըստ ժա-

նսև գործադրուեցան քաղաքիս եղեկեցեաց մեծաքանակ գումարները։ Բայց մեծ ափսոս, Գաբրիել Սրբազանը իւր ազգապիտան ձեռնարկութիւնը գլուխ բերելու միջոցին՝ մի բանի մէջ սխալեցաւ, որ այն բաղձալի ազգային վարժարանը կանգնեց ոչ թէ Նախիջևանի մէջ, ուր էր իւր վիճակի բազմամարդութիւնը, ուր և աւելի զգալի էր այնպիսի ուսումնարանի կարօտութիւնը, որուն հասարակութիւնը կ՚ձգտէր շատ տարիներէ ի վեր. այլ տարաւ շինեց այն Թէոդոսիա քաղաքին մէջ՝ թերևս կարծելով, որ իւր մերձաւոր հսկողութեան ներքոյ և ժողովրդէն հեռի, կրնար աւելի օգտակար անել զայն նոյն իսկ ժողովրդի համար։ Եւ ի՞նչ եղաւ դորա հետևանքը։ Դժգոհութի՞ւնք և ապա խռովութի՞ւնք Նախիջևանի ժողովրդեան կողմանէ, որոց պատճառաւ դարձեալ ըւրկ մնաց ինքը ազգային ուսումնարանէ և իւր եկեղեցեաց գումարները տարուեցան այլ տեղ գործադրուելու. անբաւականութի՞ւնք ընդ մէջ ի Տէր հանգուցեալ Մատթէոս Կաթուղիկոսի և Գաբրիել Սրբազանին, սորա առաջնորդութենէ հրաժարուելը, Թէոդոսիոյ Խալիպեան ուսումնարանին փակուելը՝ ի մեծ վնաս վիճակիս ժողովրդոյ և ամբողջ հայ ազգութեան։

Արդարև, փոքր չէր այն վնասը, որ ունեցաւ հայոց ազգը ընդհանրապէս և վիճակիս ու քաղաքիս ժողովուրդը ի մասնաւորի՝ Խալիպեան ուսումնարանի փակուելէն. քանի՛ քանի՛ ազգապիտան պատանիներ արձակած էր արդէն այն ուսումնարանը շատ տեղեր

ազգային ուսումնարանի անհրաժեշտ լինելը, ուստի և իւր բոլոր հոգացողութիւնը դարձոյց դորա վրայ, որ հիմնէ իւր վիճակին համար մի ազգային վարժարան։ Յայտնեց նա իւր միտքը քաղաքացեաց, դտաւ իրեն համակրող ամբողջ հասարակութիւնը, որ իւր հովուի խօսքերուն ականջ դնելով, վաղ անցաւ իւր եկեղեցեաց գումարները իր ձեռքով պահանջելէն, որոյ համար շատ տարիներէ ի վեր վէճ բացած ունէր, ամենայն ինչ յանձնեց նոր և աշխարհահռչակ Առաջնորդին, իւր բոլոր եկեղեցեաց գումարները աւանդեց նորա ձեռքը, միայն թէ կատարէր նա իւր խոստումը՝ մի ազգային վարժարան տար իրեն, ժամանակիս յարմար լուսաւորէ իր որդիքը, արժանի որդիք պատրաստէր նոցանէ՝ որդիք ազգի և եկեղեցւոյ, պատրաստէր արդիւնաւոր անդամներ հասարակութեանս համար, որ և ընդ նմին լինէին հաւատարիմ հպատակներ բարերար Տերութեան մերոյ։

Բարեյիշատակ Յարութիւն աղայ Խալիպեանը, համակրելով Գաբրիել Սրբազանի ազգօգուտ դիտաւորութեանը, գուցէ և իւր համազգեաց նպաստելու և նոցա մէջ անմահ յիշատակ թողցնելու մտօք, այն ժամանակ և եթ նուիրեց 50 հազար ր. Գաբրիել Սրբազանի բանալու ուսումնարանին շինութեանը համար, խոստացաւ յաւելցնել ևս այդ գումարի վրայ նոր գումար, եթէ պէտք լինի, որ և կատարեց վերջը՝ իւր նուիրագործութիւնը հասցնելով, ինչպէս կասեն, մինչև 200 հազարի, որով կանգնեցաւ Թէոդոսիոյ Խալիպեան ազգային ուսումնարանը, որոյ վրայ

մանակին մեծամեծ ծախքեր անելով: դանուել են մեր մէջ՝ օրինակի համար բարեյիշատակ Մկրտչեան Մանուէլ աղայի նման բարեգործ անձինք, որ մինչև իւր բոլոր գոյքը նուիրած էն ազգային կրթութեան և լուսաւորութեան նուիրելու, և անոր համար պէտք եղած շէնքը կանգնելուն իւրով սեփականութեամբ: Բայց աւաղ մինչև ցայսօր հասած չէր մեր հասարակութիւնը իւր բարի նպատակին, ի դերև եղած էին իւր ամէն հետևողութիւնները իրմէ անկախ պատճառներով, չէր կրցած իւր մէջ ունենալ մի այնպիսի ուսումնարան, որ ձեռնհաս ըլլար քաղաքի և հայ հասարակութեան ամէն պէտքերը լրացնելու: Վերջ ի վերջոյ տեսնելով որ ինքնանք չէն կարող իրենց միջոցներով այդ սուրբ նպատակին հասնել, և կարծելով որ քաղաքի ուսումնարանը, եթէ արքունի վարչութեան ձեռք անցնի, լոյսէ թէ իրմէ ակնկալած պտուղները կրնան ստանալ, ուստի մեր նախնիք իրենց ունեցած փոքրիկ դպրոցը, որ էր ազգային խոնարհը, գաւառական դպրոցի դարձուցել էին: Արդեօք քաղաքիս գաւառական դպրոցը մեր հասարակութեան յոյսերը արդարացնել, կրցա՞ն նա մեր ժողովրդեան պէտքերը լրացնել, այդ քաջ յայտնի է քաղաքիս ժողովրդականաց ամենուն:

1857 թուին Առաջնորդ նշանակեցաւ Վիճակիս Աշվաղեան Գաբրիել Արքեպս: Առաջին անգամն որ Դսխիջևան եկաւ նա իրրև հովիւ հոգևոր, խոյն ճանաչեց քաղաքիս ցաւը, հասկացաւ հասարակութեան կարիքն ու ցանկութիւնը, տեսաւ այս տեղ

իւր ոչ երկարատև գոյութեան միջոցին, և ոչքան արդիւնքներ կրպատուէր նորանէ ազգութեանս համար: Մի մխիթարական բան միայն թողուց Խալիպեան ուսումնարանի փակումը, որ նորանով չիտափանուեցաւ խապառ այն բարի դիտաւորութիւնն ու նպատակը, որոյ համար կանգնած էր այն ուսումնարանը, այլ աւելի շօշափելի կերպով յայտնի արաւ Դսխիջևանի հասարակութեանը ազգային ուսումնարանի անհրաժեշտ պէտք լինելը իւր մէջ. դրդեց նորան ՀԴԱՊՐԻԼ իւր վաղեմի հետևողութենէն, այլ նոր եռանդով ամէն ջանք ի գործ դնել որ նոյն հաստատութիւնը փոխադրուի այս քաղաքը:

Ի փակիլ Խալիպեան ուսումնարանի, Օգոստափառ Կայսրն մեր բարեհաճած էր ԲԱՐԶՐԱԳՈՆՑ հրամայել, որ նոյն ուսումնարանը Թեմական Սեմինարիայի փոխադրուի և նորա մեծածախ շինուածքը յատկացուցուի նոյն դպրոցին, իսկ կառաւրումն յանձնուի ազգիս ընդհանուր Հայրապետի անօրէնութեանը:

Դսխիջևանի հայազգի հասարակութիւնը՝ այդ լուրը առնելով, իսկոյն և եթ 1871 թուին դիմեց Վեհափառ Հայրապետի ողորմութեանը ազերսելով, որ նոյն Սեմինարիայն կամ Դպրանոցը բարեհաճի հայրաբար փոխադրել Դսխիջևան, ուր է վիճակի բազմամարդութիւնը, խոստանալով միանգամայն որ նորան պէտք եղած նպաստները ինքը կրհասցնէ լեռվին:

Ազգիս Վեհափառ Հայրապետը՝ հոգ ունելով իւր հոգևոր զաւակաց բարոյական և մտաւոր զար-

գացման վրայ, այլ և ունկն դնելով նոցա աղաչանացը, իւր պատուական կոնդակաւն, որ ի 13 սեպտ. 1873 ամի, յայտնեց քաղաքին հասարակութեանը, որ ինքը յօժար է Խալիպեան ուսումնարանը փոխադրուած տեսնել ի Նախիջևան և վերակոչել այն Թուրքական Դպրանոց Նոր Նախիջևանայ և Ռեսպուբլիոյ վիճակի, եթէ քաղաքիս հասարակութիւնը յանձն առնու իւր վերայ այն դպրոցի Հոգաբարձական խնամքը և իւր խոստմունքները լիովին կատարէ: Ա՝ հափառ Հայրապետը գրած էր նաև բանալի Դպրանոցի կառավարութեան համար մի կանոնադրութիւն՝ առաջարկելով, որ նորա ամէն կանոնները վերաքննուին և առաջարկուին ինքեան ի հաստատութիւն:

Ա՝ հափառ Հօր նոյն օրհնաձիր կոնդակի մէջ յիշուած էր և այս, թէ՝ Դպրանոցը պիտի հաստատուի Նախիջևան քաղաքի մէջ ի դաստիարակութիւն ցանկացողաց նուիրել զանձինս ի սպասաւորութիւն եկեղեցւոյ, բայց և այնպէս չպիտի պարտաւորին ամենեքեան անպատճառ և անխտիր մնանել ի կոչումն եկեղեցական վիճակի, այլ յաւարտ վարժութեանցն ի նմին կարին՝ ըստ արդեանց ուսմանցն իւրեանց՝ ընտրել որ և իցէ պաշտօն քաղաքական կամ շարունակել ի բարձրագոյն ուսումնարանս:

Նախիջևանի քաղաքական վարչութեան ժողովը (Տուման) ուրախութեամբ ընդունելով իւր Ա՝ հափառ Հայրապետի օրհնաձիր կոնդակն ու ազգաշահ առաջարկութիւնները և առանձին յանձնաժողովի քննութեամբն ու կշռադատութեամբը հաստատ լինելով ազգիս Ա՝ հափառ Հայրապետի բարեսէր և ազգօգուտ նպատակներուն, որ է՝ վիճակիս եկեղեցեաց համար բարեկիրթ և մասնաւորապէս զարգացած սպասաւորներ պատրաստել, այլ և Ա՝ հափառ Հօր առաջարկած Դպրանոցը համապատասխան գտնելով Նախիջևան քաղաքի հասարակութեան վաղեմի բաղձանացն ու հետևողութեանցը, որ էր մի ազգային վարժարան ունենալ, — ընդ նմին կարի օգտաւէտ համարելով ունենալ քաղաքին մէջ մի կլասսիկական վարժարան, որպիսին կարէր լինել Սեմինարիայն, — իւր 1874 թիւի փետրվարի 24-ին կայացած ժողովոյն մէջ որոշեց, խնդրել մեր ազգասէր Հայրապետէն, որ բարեհաճի իրագործել իւր բարի և ազգօգուտ ձեռնարկութիւնը և Դպրանոցն բանայ Նախիջևանի մէջ:

Քաղաքական ժողովոյ այս արած որոշումն հազիւ մի ամիս անցել էր, և ահա Ապրիլի 5 հասաւ Ա՝ հափառ Հօր ցանկալի կոնդակը, որով բարեհաճել էր մեր հասարակաց Հայրն և Հովանաւորիչը ընդունել ի դիմաց քաղաքական վարչութեան առաջարկած բանալի Դպրանոցին վերաբերեալ ծրագրութիւնը, հաստատել նորա դրամաւոր եկեղեցական արդիւնքները, որոց վրայ մատնացոյց եղած էր կանոնադրութեան մէջ, շնորհել նորա պահպանութեան համար Թէոդոսիոյ Խալիպեան ուսումնարանի շինուածքը միջի կահ կարասիքովն ու տպարանաւը, առաջարկելով միանգամայն ,, ամենապարել ընտրել զհոգաբարձուս, կազմել զհոգաբարձութիւն և ընդ

փոյթ բանալ և կառավարել զԴպրանոցն»։ Ո՞ր-պիսի երիտասարդական աղնիւ եռանդ, ո՞րպիսի անձնանուիրութիւն ազգային յառաջադիմութեան և ո՞րպիսի քաղցր հոգւոյ արդասիք։

Ա՛ռհավատ Հայրապետի այս կոնդակի հիման վերայ Նախիջևանի քաղաքական վարչութեան Մայիսի 13 կազմած ժողովի մէջ ընտրուեցան բանալի Դպրանոցին համար՝ Հոգաբարձուներ, որք և հեռագրով Նորին Ա՛ռհավատութեան հաստատութիւնը ստանալով, կազմեցին առաջին Հոգաբարձութիւնը և իսկոյն ձեռք զարկին Դպրանոցի բացման և կառավարութեան պէտք եղած պատրաստութիւնները հոգալու։ Նախ և առաջ յանձնեցին Գերապատիւ Աղափիրեան Գրիգոր Արքեպսկոպոսին, որ նոյնպէս ընտրուած և հաստատուած էր Դպրանոցի առաջին տեսուչը լինելու, անձամբ երթալ ի Թէոդոսիա, Խալիպեան ուսումնարանի շինուածքը ընդունել, նորա միջի կահ կարասիքը և տպարանը ստանալ, անպէտք և անփոխադրելի իրեղէնքը ծախել այն տեղ, և պէտքականները տպարանին հետ միասին բերել ի Նախիջևան։

Այս հոգացողութիւնը կատարելէն յետոյ, հետեողութիւն ունեցաւ Հոգաբարձութիւնն և գրեց Պ. Նահանգապետին, որ թոյլատրէ տպարանին Նախիջևանի մէջ բանելու, յորմէ ոչ սակաւ արդիւնք կրնայաստուէր բանալի Դպրանոցին համար, և որոշեց որ առաջիկայ 1875 թիւի Փետրվարի 2 բացումն լինի նոյն իսկ Դպրանոցին։ Բայց որովհետև Դպրանոցի կանոնադրութիւնը դեռ ևս հաստատուած չէր Բարձրագոյն կառավարութեան կողմանէ, ինչպէս որ Տէրութեան օրէնքով կրպահանջուի, Պ. Նահանգապետը արգիլեց Դպրանոցի բացումը և թոյլ չտուաւ Հոգաբարձութեանը, որ կարողանայ տպարանը ինքն բանեցնել։ Ա՛սն որոյ և Հոգաբարձութիւնը ստիպուեցաւ տպարանը վարձու տալ կապալառուաց, Դպրանոցի բացումը դադարեցնել և իրողութիւնը յայտնել Ա՛ռհավատ Կաթուղիկոսին։

Մեր Ա՛ռհավատ Հայրապետը, ինչպէս կերևի Հոգաբարձութեան գործերէն, իսկոյն դիմած է Բարձրագոյն կառավարութեան՝ առաջարկելով Դպրանոցի կանոնադրութիւնն ի հաստատութիւն, իսկ Հոգաբարձութեանը հրամայած էր Դպրանոցը բանալ «Հոգևոր Դպրոցի անունով» մինչև կըհասնի Բարձրագոյն հաճութիւն այն դպրոցը թէմական Դպրանոցի փոխադրելու։ Ահա այս հիման վրայ Նախիջևանի հոգևոր Դպրոցը 1875 թիւի Սեպտեմբեր ամսեան մէջ՝ Աղափիրեան Գրիգոր Արքեպսկոպոսի տեսչութեամբ սկիզբն առնելով՝ վարեց իւր ընթացքը մինչև այս օրս։

1875-էն մինչև 1880 թիւը ոչ սակաւ հետևողութիւն ունեցաւ մերազգի սուրբ Հայրապետը, որ ընդունելի կացուցանէ իւր առաջարկութիւնը առաջի Տէրութեան և հաստատել տայ թէմական Դպրանոցի առաջարկուած կանոնադրութիւնն և նորա արտօնութիւնները, որով և Դպրանոցը կրնայ անցնել ազգունի միջնակարգ ուսումնարանաց կարգը և վայե-

լել նոցա իրաւունքները։ Արդարև, պէտք է խոստովանել, որ միայն մեր այժմեան Ա. Հայրապետի նման զաւակասէր հայրը կարող էր դէմ դնել անթիւ և անակնկալ խոչընդոտներու, հաստատ մնալ իւր մտադրութեան վրայ, որ հայէր յօդուտ իւր զաւակաց, և հասնել վերջապէս իւր ազգաշէն նպատակին։

Հասաւ 1880 թիւը, բերեց այն ուրախ առիթ լուրը, որ ի հինգ ամաց հետէ ակնկալած անձկութեամբ կը սպասուէր. Յունիսի 27-ին հետևեցաւ վերջապէս արդ հանդուցեալ երջանկայիշատակ Օգոստափառ մեծ Կայսեր Ալեքսանդր Նիկոլայևվիչի ԲԱՐՁՐԱԳՈՅՆ բարեհաճութիւնը, որ Նախիջևանի հոգևոր Դպրոցը փոխադրուի ի Թեմական Դպրանոց վիճակիս և հաստատուին ազգիս Ա. Հայրապետի առաջարկած նորա համար հիմնական կանոնները։ Այն կանոնաց նայելով Դպրանոցը կը բացուի Նախիջևան քաղաքիս մէջ, կը կառավարուի վիճակի եկեղեցեաց և Խաչիկեան ուսումնարանի տան արդունքներով, նորա բոլոր կառավարութիւնը կը յանձնուի Հոգաբարձութեան, որոյ անդամները կընտրուին Նախիջևանի հայազգի ժողովրդէն, և ինքն է միջնակարգ հաստատութիւն հայաստանեայց եկեղեցւոյ բանիբուն և բարեկիրթ եկեղեցականներ պատրաստող, ծիսական հայ ուսումնարանաց համար ուսուցիչներ յառաջ ընծայող հայ ազգի զաւակները դաստիարակող, միանգամայն այնպիսի վարժարան, որոյ մէջ Տէրութեան միս միջ-

նակարգ ուսումնարանաց ծրագրով պիտի աւանդուին ընդհանուր ուսմունք ժողովրդոց ամենայն դասակարգի համար, որպէս զի նորա ուսումնաւարտ աշակերտները բարեկիրթ և պիտանացու անդամներ լինին եկեղեցւոյ և հայ հասարակութեան, և Տէրութեանը հաւատարիմ հպատակներ։

Ազգիս Ա. Հայ. Հայրապետը Թեմական Դպրանոցին այս Բարձրագոյն հրամանաւ հաստատուած Հիմնական կանոններն ընդունելով, յանձնած էր վիճակիս Սրբազան Առաջնորդին, որ անձամբ Նախիջևան հաճի գալ, տեղւոյս հոգևոր Դպրոցը Թեմական Դպրանոցի փոխարկելու հոգացողութիւնները անէ, նորա պահպանութեան և կառավարութեան համար պէտք եղած միջոցները որոշէ, տեղւոյ հասարակութեան անդամներէն առանձին յանձնաժողով մի կազմէ և ի միասին խորհրդակցելով՝ Բարձրագոյն հաստատուած Հիմնական կանոնաց վրայ, այլ ևս բարեկարգութեան կարևոր կանոններն սահմանէ, Հոգաբարձական Խորհրդարանը կազմակերպէ և աշխատ լինի ըստ կարի՝ ներկայ տարւոյ ուսումնական շրջանի սկիզբը՝ Թեմական Դպրանոցի բացումը կատարել նոր և հաստատուն կանոնաց հիման վրայ։

Վիճակիս Առաջնորդ Բարձր Սրբազան Մատթէոս Արքեպիսկոպոսը՝ իւր հոգևոր տեսչութեանը յանձնուած ժողովրդին բարոյական օգուտները միայն աչքի առաջ ունենալով և չնայելով անձնական տկարութեանը՝ Մայիս ամսոյ մէջ ճանապարհեց Նախիջևան գալու, ամիսուկէս շարունակ այստեղ իւր առաքե-

լութեան խնդիրներուն զբաղեցաւ, Դպրանոցի ամենայն հանգամանաց անձամբ հասու եղաւ, նորա տարեկան եկամուտները որոշեց, կարեւոր կարգադրութիւններն արաւ, սահմանեց, որ վիճակի ամէն եկեղեցիքը՝ Խարբերդոյն հաստատուած Հիմնական կանոնաց համեմատ՝ իւրեանց արդիւնքներովը ըստ կարի մասնակից գտնուին Թեմական Դպրանոցի պահպանութեանն ու կառավարութեանը: Գտաւ նոյնպէս, որ Դպրանոցը եկեղեցական արդիւնքներով ու Խալիպեան ուսումնարանի շինուածքին վարձովն միայն և աշակերտաց թոշակովը, որոց գումարը կարէր հասնել մինչև 10 հազարի, պիտի չկարողանայ անխափան կառավարուիլու և իւր նպատակին հասնելու, դիմեց քաղաքիս հասարակութեանը և խնդրեց, որ նա, — արդէն կատարուած տեսնելով իւր վաղեմի ցանկութիւնը, այն է՝ ունենալ իւր քաղաքի մէջ մի ազգային վարժարան օժանդակ լինի նորան թէ մասնակցելով նորա Հոգաբարձական կառավարութեան գործերուն և թէ իւր միջոցներովը տարեկան մի հաստատուն նպաստ կապելով Դպրանոցի պահպանութեան և յարատեւութեան համար:

Տեղւոյս քաղաքական վարչութիւնը սիրով ընդունեց իւր Սրբազան Առաջնորդի առաջարկութիւնը և Յունիսի մէջ կայացած ժողովի կարգադրութեամբը սահմանեց նպաստամատոյց լինել Դպրանոցի կառավարութեանը տարեկան մինչև ի 7 հազար լուբլի գումար հասուցանելով և տեղւոյս հայ հասարակու-

թեան պատկանած դպրոցական տունը նորա աշակերտաց դետեղմանը համար շնորհելով:

Այդ տնօրէնութեամբ Սրբազան Առաջնորդը ապահոված տեսնելով Դպրանոցի պահպանութիւնն ու անխափան կառավարութիւնը՝ թէ դրամական միջոցներով և թէ պէսպէս բարեկարգութեան կանոններով, դիմեց Վեհափառ Կաթուղիկոսին, որ հաստատէ իրեն առաջարկուած բարեկարգութեան կանոնները և թոյլատրէ նոյն կանոնաց հիման վերայ ընտրել Հոգաբարձունք, կազմել Հոգաբարձութիւն և նոյն ուսումնական տարւոյն սկիզբն կատարել Թեմական Դպրանոցի բացումը:

Օգոստոս և Սեպտեմբեր ամսոց մէջ ստացուեցաւ Վեհափառ Հայրապետի օրհնութիւնն և թոյլտուութիւնը, կատարուեցան Նախիջեւանի ժողովրդոց կողմանէ 60 պատգամաւորաց ընտրողութիւնը և նոցա ձեռքով վեց Հոգաբարձուաց ու նոցա օգնականաց ընտրութիւնը, Սրբազան Առաջնորդը նշանակեց իւր Տեղակալ Հոգաբարձութեան նախագահելու համար, կազմակերպեցաւ վերջապէս Թեմական Դպրանոցի Հոգաբարձական Խորհրդարանը, և դա իւր Հոկտեմբերի 12-ին և 28-ին կազմած նիստերուն մէջ որոշեց Նոյեմբեր ամսոյս 8-ին կատարել Դպրանոցի օրհնութիւնն ու բացումը, որ և Աստծոյ ողորմութեամբ հանդիսապէս կատարուեցաւ ի մխիթարութիւն սրտից մերոց Վեհափառ Հայրապետի և Սրբազան Առաջնորդի և ամենայն հասարակութեան տեղւոյն:

ԳՐԱԴԱՐԱՆ

Նոր Նախիջևանայ և Ռեսսարաբիոյ Թեմական Դպրանոցի սկզբնաւորութեան և բացմանը վերաբերեալ հանգամանաց համառօտ նկարագրութիւնը անելով, ոչ աւելորդ կը համրուի ասել քանի մի խօսք նաև նորա նշանակութեանն ու նպատակին վերայ։ Ինչպէս կերևի Հիմնական կանոններէն, դա է միջնակարգ հաստատութիւն վիճակի եկեղեցեաց համար բարեկիրթ և մտաւորապէս զարգացած սպասաւորներ և պաշտօնեաներ, ևս և ծխական դպրոցաց համար բանիբուն ուսուցիչներ պատրաստելու համար բացուած մի վարժարան։ Բայց և այնպէս սա պիտի լինի նոյնպէս հոգևոր ազգային ուսումնարան հայ ժողովրդոյն ամենայն դասակարգաց համար և իւր մէջ պիտի աւանդուին ընդհանուր գիտութիւնք՝ ըստ ծրագրի միջնակարգ ուսումնարանաց, որպէս զի Նորա մէջը մտնող աշակերտներն ամէնքը մի օրինակ բարոյական և մտաւոր կրթութիւն ստանալով՝ հաւատարիմ հրպատակներ լինին բարերար Տէրութեան, կրթեալ և արժանաւոր անդամներ դառնան իրենց քաղաքի հասարակութեան, և օգտակար որդիք՝ իրենց ազգին և եկեղեցւոյն։

Հոգևոր կրկոչուի սա Նորա համար, որ ընդ տեսչութեամբ հոգևոր իշխանութեան կը գտնուի, և այլապէս չէր կարող բացուիլ, և ազգային է անոր համար, որ մէջի առարկաները պիտի աւանդուին մեծաւ մասամբ մայրենի բարբառով, որպէս զի աւելի դիւրըմբռնելի լինին աշակերտաց համար, և դաստիարակութիւնը պէտք է կատարուի հայկական հոգւով։ Բայց

յայնմանէ իւր ամբողջ կառավարութիւնը՝ ըստ ամենայն մասանց՝ կը գտնուի հայ ժողովրդէն ընտրուած Հոգաբարձուաց ձեռքը։ Իսկ ի մասնաւորի, Թեմական Դպրանոցին յատկանիշ նպատակ դարձուցուած է, ինչպէս Հիմնական կանոններէն կը տեսնուի, Հայաստանեայց եկեղեցւոյ համար բարեկիրթ պաշտօնեաներ և ծխական դպրոցաց համար բանիբուն ուսուցիչներ պատրաստել։ այլ և ուսմանց ծրագրին մէջ զետեղուած են նաև Աստուածաբանական գիտութեանց վերաբերեալ քանի մի առարկաներ, որ չեն աւանդուիր ուրիշ միջնակարգ ուսումնարանաց մէջ։

Գիտենք որ ամենայն տեղ, ուր որ հայ ազգը կը գտնուի, վերջին ժամանակներս անթիւ մեղադրանք և դանդատանք կը լսուին եկեղեցականաց դէմ, որպէս թէ ժողովուրդը ուսմամբ և գիտութեամբ առաջ կերթայ և աւելի բարձր կանգնած է իւր եկեղեցականներէն, իսկ եկեղեցւոյ սպասաւորները յետ կը մնան և համապատասխան չեն ժողովրդեանը կրթութեամբ, մինչդեռ պէտք է որ նոքա աւելի բարձր լինեն իւրեանց արժանաւորութեամբքը, որ կարողանան իրենց վերայ առած՝ թէ առ Աստուած և թէ առ ժողովուրդն պարտքերը արժանապէս կատարելու, որ և անհերքելի ճշմարտութիւն է։

Յայտնի է ամենեցուն որ եկեղեցւոյ պաշտօնէին, բացի ըստաւորեալ ներկայ ժամանակիս յարմար գիտութիւններէն, հարկաւոր է անշուշտ նաև Աստուածաբանական գիտութեանց, հայկական լեզուին ու գրականութեանը հիմնովին տեղեակ լինել։

Դաղանիք չէ և այն, որ Տէրութեան օրէնքով, արքունի ուսումնարանաց մէջ չեն կարող աւանդուիլ, եթէ չասենք բոլորովին, գոնէ դոհացուցիչ չափով, հայոց լեզուն և կրօնը։ Եթէ մենք չունենանք մեր մէջ առանձին ազգային ուսումնարան, որոյ մէջ միայն կարելի է դոհացուցիչ կերպով ուսումնասիրել հայոց գրականութիւնն ու կրօնը, ուսկի՞ց պիտի գտնուի մեր հին լեզուին և մատենագրութեանը տեղեակ եղողներ, որ յօժարին եկեղեցւոյ պաշտօնեաներ լինել մեզ, քանի որ մեր ազգային աւանդութեամբը մեր եկեղեցւոյ պաշտօնեաները կընտրէ ինքը ժողովուրդը իւր իրաւասութեամբը և իւր մէջէն։ Ըկամեցուի՞ միթէ մեր ազգային իրաւունքը՝ մեր ազգին միայն սեփական, այն է՝ իւր եկեղեցականն ընտրել իւր մէջէն, ձեռքէ թողուլ և ուրիշ տեղերէ մեզ արժանաւոր քահանայացուներ և եկեղեցւոյ պաշտօնեաներ սպասել։

Այլ և Տէրութեան օրէնքով ստիպողական է մեզ համար այսուհետև, որ մեր ծխական դպրոցաց ուսուցիչները անպատճառ վարժապետութեան իրաւունք և վկայագիր ունենան։ Իսկ եթէ այն վարժապետաց հայերէն ուսանելու և ուսուցչութեան վկայագիր ստանալու վարժարան չունենանք, ո՞ր տեղ պիտի պատրաստուին մեր ծխական դպրոցաց ուսուցիչները և ուսկի՞ց պիտի ստանան ուսուցչութեան իրաւունքն ու վկայագիրը։ Մի՞թէ կըկամեցուի, որ մեր ծխական դպրոցները՝ ուսուցչաց պակասութեան պատճառաւ փակ մնան։

Ահա սոյն այս պատճառներուն համար է, որ

մեր թեմական Դպրանոցին առանձին նպատակ ևս յատկացուցուած է ծանրակշիռ խոհականութեամբ եկեղեցւոյ պաշտօնէից և ծխական դպրոցաց ուսուցչաց պատրաստութիւնը։ Եթէ այս պարտքը նա բարեխղճաբար կատարէ, անտարակոյս մեծ ծառայութիւն մատուցած կլինի հայաստանեայց եկեղեցւոյ և հայ ազգութեանը։

Ընդունուին մեր մէջ այնպիսի անձնաւորութիւնք, որ կասեն թէ՝ այս Դպրանոցը միայն եկեղեցական դասու համար է, ուստի և չէ կարող բաւականացուցիչ վարժարան լինել քաղաքի դասակարգաց ամենայն վիճակին և կոչման համար, և թէ նորա մէջ աւանդելի Աստուածաբանական դիտութիւնները աւելորդ առարկաներ են քաղաքացեաց համար։

Ով մեր ազգի պատմութեան և գործոց փոքր ի շատէ տեղեակ է, նա ի հարկ է դիտէ, որ մեր ազգի հոգևորականութիւնը երբէք առանձին մի դասակարգ կազմած չէ, նա առանձին իւր սեփական ինտերեսները երբէք ունեցած չէ կաթոլիկների կղերականաց նման, նորա պարտքն եղած է միշտ ազգի շահերուն ծառայել, իւր շահը ազգի միայն շահերուն մէջ տեսնել, այնպէս որ մեր մէջ ազգն և եկեղեցին ոչ թէ երբէք մէկ մէկէ ջոկուած երկու առանձին իրարու հակառակ կուսակցութիւններ եղած են, այլ միանգամայն ասոր հակառակ՝ գրեթէ միշտ մէկ միաձոյլ մարմին են կազմած։ Բաց յայնմանէ՝ մեր եկեղեցւոյ պաշտօնեաները միշտ ընտրուած են և կընտրուին ժողովրդականաց մէջէն և ժողովրդի

իրաւասութեան ձայնով միայն ուրեմն ի՞նչպէս կարելի է թոյլատրել, որ թեմական Դպրանոցը լոկ հոգևոր վերատեսութիւն ունենալուն առանձին սահմանափակ ուսումնարան լինի՝ միայն եկեղեցական դասու համար:

Ինչ որ կրվերաբերի Աստուածաբանական դիտութեանց, որ պիտի աւանդուին այն ազգային ուսումնարանին մէջ, դոքա այնպիսի առարկաներ են և այն չափով միայն պիտի աւանդուին Դպրանոցի մէջ, որ դոցա ուսանիլը և դիտնալը, ոչ թէ միայն եկեղեցականի, հապա ամէն մի բարեկիրթ և կատարեալ կրթութիւն ստացող հայ քրիստոնէի համար հարկաւոր է անշուշտ և ոչ աւելորդ:

Ալիճակիս թեմական հոգևոր Դպրանոցը բացուեցաւ, ունելով 1881—1882 տարուայ ուսումնական շրջանին մէջ՝ քաղաքի հանդամանաց նայելով, երկու դպրանոցական դասարաններ, այն է՝ առաջին և երկրորդ և երեք նախակրթարանաց բաժինք ստորին, միջին և բարձր: Առաջիկայ տարւոյն սկիզբը կրբացուի՝ Աստծոյ ողորմութեամբ երրորդ դասարան, և այնուհետև իւրաքանչիւր տարի կաւելնան հետզհետէ մի մի դասարան մինչև դասարանաց թիւը կրլրանայ և կլինին ընդ ամէնն վեց, բայց ի նախակրթարաց: Ի սկզբանն աշակերտաց թիւն էր առաջնոյն մէջ 21, երկրորդին 20, նախակրթարանի ստորին բաժին 29, միջին 37 և բարձրին 45, ընդ ամենայն 152: Երկու դպրանոցական դասարանաց մէջ աւանդելի առարկաներն են. կրօն, լեզուներ հայոց, ռուսաց, լատինաց, դաղղիացւոց և առարկայք թուաբանութիւն, պատմութիւն, աշխարհագրութիւն, գծագրութիւն, գեղագրութիւն, երգեցողութիւն և մարմնամարզութիւն: Նախակրթարանաց մէջ. կրօն, լեզուներ հայոց և ռուսաց, գիր և երգեցողութիւն: Ուսանող բովանդակութիւնը պէտք է լինի ըստ կարի տարբունի միջնակարգ ուսումնարանաց ծրագրին համաձայն, այնպէս որ Դպրանոցի իւրաքանչիւր դասատուն համապատասխան լինի նոյնպէս դասարանի տարբունի վարժարանաց:

Թեմական Դպրանոցի կառավարութիւնը կը կազմեն Հոգաբարձական Խորհրդարան, որոյ նախագահն է վեհափառ Սրբազան Առաջնորդը, որ իւր Տեղակալ նշանակած է դերապատիւ Սուքիաս Սրբազան Եպիսկոպոսը, և անդամք. Պպ. Գրիգոր Կարապետեան Սալթիքեանց, Մինաս Եղիայան Պալապանեանց, Սերովբէ Յարութիւնեան Աճէմեանց, Գէորգ Աւետիքեան Տիգրանեանց, Սերովբէ Խաչատրեան Յարութիւնեանց և Յովհաննէս Մինասեան Թերբերեանց. օղնականք նոցին Պպ. Մ. Ա. Խալիպեանց, Մ. Գ. Մահտեսեանց, Ս. Կ. Խաչեանց, Յ. Թ. Խատամեան, Ս. Ղ. Թիւտեանց և Յ. Թ. Թէղ-էշահինեան: Իսկ Դպրանոցի ներքին կառավարութիւնն ու բարեկարգութիւնը կրգտնուի տեսչութեան ձեռքը, որոյ պաշտօնը ժամանակաւորապէս յանձնուած է Տէր Խաչատուր աւագ քահանայի Օշարիֆեան, մինչև ոչ անագան կը հրաւիրուի ու կը կարգուի սորան մի արժանաւոր հաստատուն տեսուչ:

Դպրանոցի ուսուցիչներ նշանակուած են առ այժմ

նոյն անձինքը, որ էին քաղաքի հոգևոր Դպրոցին մէջ, մինչև կրթացուին ուրիշ բարձր դասարաններ և կրհաւատրուին անտարակոյս Բարձրագոյն ուսումնարանները աւարտած և աւելի բանիբուն վարժապետներ:

Ի վերջոյ անկարելի է լռելեայն անցնել և քանի մի խօսքով չի յիշատակել թէ որոց առաւել երախտապարտ պիտի համարենք մեզ, որ այսօրս Դպրոցական և Բնասարաբոյ վիճակս բաղտաւորութիւն ունի իւր մէջ թեմական Դպրանոց ազգային ուսումնարանը—բացուած տեսնել: Պէտք է ճանաչուի որ այդ եղած է, նախ և առաջ, շնորհիւ մեր երջանկայիշատակ և ազգի նահատակ թագաւոր Կայսեր Ալեքսանդր Նիկոլայեվիչի, որ 1880 թիւ Յունիսի 27-ին բարեհաճեցաւ Բարձրագոյն հաստատել թեմական Դպրանոցիս Հիմնական կանոնները, որով ազգային ուսումնարանս այս անցաւ արքունի միջնակարգ ուսումնարանաց կարգը: Երախտագիտութեան պարտք է մեզ ընդ միշտ աղաչել Աստծոյ, որ այս բարերար թագաւորի հոգին իւր սրբոց և հրեշտակաց դասուն դասաւորէ և յաւիտենական հանգիստ պարգևէ նորան յօթևանս արդարոց:

Յիշենք, որ մեր նախնիքը իւրեանց հայրենեաց մէջ անտանելի տառապանքներ կրելով բարբարոսաց հարստահարութենէն, Ռուսաց Կայսերութեան հայրախնամ կառավարութեան ներքոյ միայն դադարառին և երջանկութիւն գտին՝ Կայսերագիր հրովարտակներով զանազան առանձնաշնորհութիւններ ստանալով և ազատութիւն ունելով իրանց մայրենի

լեզուն պահպանելու և ուղղափառ կրօնը պաշտելու: Իսկ մենք այժմեան Հայերս այս բարեխնամ Տէրութեան և մանաւանդ մեր Օգոստափառ մեծ Կայսեր Ալեքսանդր Ալեքսանդրովիչի հզօր պաշտպանութեան տակ՝ խաղաղական կեանք վարելով իրաւունք ունեցանք նաև ազգային դաստիարակութեամբ ազատօրէն զարգանալու, որոյ մէկ ապացոյցնէ անշուշտ և մեր նորաբաց թեմական Դպրանոցը: Երախտագիտական պարտականութիւն կայ մեր Հայրուս վերայ տիւ և գիշեր և յամենայն դիպուածում օրհնել մեր թագաւոր Կայսեր Ալեքսանդր Ալեքսանդրովիչի կեանքը, խնդրել միաբերան Ամենակալ թագաւորէն, որ հաստատուն պահ է մեր երկրաւոր թագաւորի Աթոռը, երկար կեանք պարգևէ նորան Օգոստափառ ընտանեօքը, զարմօք և զաւակօք հանդերձ:

Թեմական Դպրանոցի վերոյիշեալ տեղեկագրութենէն տեսնուեցաւ, որ այս ազգօգուտ հաստատութեան կանգնողն և ի գլուխ բերողն եղաւ մեր երիցս երանեալ ՏԷՐ ԳԻԷՈՐԳ Դ. Վ. եպիսկոպոս Կաթուղիկոսն ամենայն Հայոց, որ անձանձիր խնամք ունենալով իւրում հովուապետութեան յանձնուած հօտի վերայ և հոգ տանելով նորա բարոյական և մտաւոր զարգացմանը, իւր հայրապետութեան աթոռը բազմած օրէն ի վեր իբրև լուսաւորեալ և զուարակամիտ հայր, չի դադարիր ամենայն կերպ ջանալ, որ իւր հոգևոր հօտին մէջ տարածէ ճշմարիտ լուսաւորութիւն՝ հաւատացած լինելով որ դորա մէջն է

իւր ազգի միակ փրկութիւնը։ Թող յիշուի ուրեմն շնորհակալու մտոք թէ՝ քանի՞ հաստատամտութիւն և անխոչ հեռատեսութիւն ունեցած է մեր ազգասէր Հայրապետը 1873 թուէն ի վեր, մինչև որ կարողացել է ընդունելի կացուցանել առաջի Բարձրագոյն կառավարութեան իւր առաջարկութիւններն, որ ազգիս լուսաւորութեանը և թեմական Դպրանոցիս Հիմնական կանոնաց հաստատութեանը կը վերաբերէին։ Օրհնե՛նք մեր սուրբ Հայրապետի կեանքը, բարեմաղթենք միաբերան ու լիաբերան մեր բազմաշնորհ և սիրելի Հոգի քաջ առողջութիւն ի բազում ամս, անդորութիւն սրտի և կարողութիւն մեր ազգի անթիւ պէտքերը հոգալու արժանապէս նաև այսուհետև։

Թող չի մոռցուի նոյնպէս երախտագիտական գրատմամբ յիշելու մեր Սրբազան Առաջնորդ՝ Գեղեցիկ Տէր Մակար Արքեպիսկոպոսի թեմական Դպրանոցիս բացման համար ունեցած հոգացողութիւններն ևս նորա հեռատեսութեանն ու աշխատանացն ենք պարտական, որ Դպրանոցիս մշտական եկամուտներով ապահոված կարող եղաւ փութացուցանել իւր բացումը և 81—82 ուսումնական շրջանին մէջ սկիզբն առնել կատարելու իւր ազգաշահ ընթացքը։

Ուելորդ չէ յիշատակել նաև, որ Դպրանոցին վերայ ոչ սակաւ երախտիք ունեցած են, նորա բացմանէն առաջ եղած երեք Հոգաբարձական կառավարութիւնքը, որոց աշխատութեամբը Նախիջևանի հոգեւոր Դպրոցը, առանց համարեա այլուստ ուստիք դրամաւոր նպաստի, Խաչիկեան ուսումնարանի տան 1500 ռուբլի վարձքն, Նախիջևանի եկեղեցեաց 1600 ռուբլի տարեքն ու աշակերտաց թոշակովը ոչ միայն կրցաւ կառավարուիլ իւր 6 տարուան ընթացքին մէջ, այլ և մի սեփական շինուածքի տէր ևս եղաւ, որոց վերայ գնելու և նորոգութեանց ծախք եղած է մինչև 12000 ռուբլի։ Եւ եթէ մի օր Դպրանոցը իւր ակնունելի օգուտները կը բերէ թէ քաղաքացեաց և թէ նորա զաւակացը, որում կասկած չէ կարող լինել, թող ուրեմն ճանաչեն նոքա և անմոռաց միաքերը պահեն իւրեանց բարերարաց անունները, վասն զի ինչպէս երախտագիտութիւնը առաքինութեանց մէջ ամենէն վեհն է, այնպէս և ապերախտութիւնը մարդկային մոլութեանց մէջ ամենատարն է։ Ահա նոյն Հոգաբարձական կառավարութեանց անդամոց անունները.

Գրիգոր Սրբազան Եպիսկոպոս Աղափիրեան, Տէր Խաչատուր աւագ քահ. Օշարիֆեան, Պապ. Խոճայեան Գէորգ, Խլըտճեան Յակոբ, Աբաճալեան Խաչակ, Տիգրանեան Գէորգ, Խաթրանեան Գէորգ, Փոփով Յովհաննէս Մարկ., Գրիգորեան Թադէոս, Երեցփոխեան Մատթէոս (հանգ.). Պալասանեան Մինաս, Պարապետեան Միքայէլ (հանգ.), Խաչիկեան Մինաս, Խաթրանեան Յովհաննէս, Ստեփաննոսեան Խաչատուր, Ռերբերեան Յովհաննէս, Նազրեան Պօղոս (հանգ.), Աճէմեան Սերոբէ, Մխիթարեան Դիկոդայոս, Գրիստեան Սարգիս, Խոմաճեան Պետրոս, Սակիրեան Խաչերես. Աստարճեան Յարութիւն, Վարդանեան Փիլիպպոս։

Եղբ տարածուեցաւ մեր ազգայնոց մէջ վիճակիս Թուխմական Դպրանոցի բացման լուրը, իսկոյն՝ և եթ յայտնի նշաններով ապացուցուեցաւ, թէ՝ որքան կը համակրէր մեր ժողովուրդը այդ ազգային հաստատութեանը. ահա մեր պատուական քաղաքացի աղա Խաչերես Խաչիկեան Տեաչքովանց ըսելով Դպրանոցի կանոնաց հաստատուելը, և կամելով իւր կողմանէ ևս հայրենակցաց զարգացմանն, լուսաւորութեանը ձեռնտու լինել, 1881 թիւ Սեպտեմբեր ամսոյ 3-ին Ստաւրոպոլ քաղաքին մէջ օրինաւոր կտակով աւանդեց յանուն Նոր Նախիջևանի և Ռեսսարաբիոյ Դպրանոցին 100 հազար ռուբլի, և կտակի օրինակը յանձնեց Հոգաբարձութեան ի պահպանութիւն: Յետ մահուան արժանայիշատակ բարերարիս Նախիջևանի հայ հասարակութիւնը պէտք է ստանոյ այդ գումարը, և նորա տոկոսիքը տարին տարենական հաստացանէ Դպրանոցի Հոգաբարձական կառավարութեան: Դպրանոցի Հոգաբարձութիւնը կըպարտաւորուի նոյն գրամը գործ ածել քաղաքի աղքատ և չքաւոր տղայոց վերայ իւր մէջ դասատիարակելու և տպա նոցանէ ընդունակները իւր հաշուով Տեղութեան կամ Եւրոպիոյ բարձրագոյն ուսումնարանները ղրկելու, որպէս զի նոքա՝ ազգի ազգի դիտութիւններով կատարելագործուած՝ վերադառնան իրենց հայրենիքը և պիտանացու անդամներ լինին հասարակութեան: Թող գովուի երախտագիտական զգացմամբ մեր պատուական հայրենակցի ազգասիրութիւնն ու առատաձեռնութիւնը, որ առաջինը ձգեց իւր առատ

տուլքը այս ազգային ուսումնարանիս գանձարանը և անմահ յիշատակ թողից իւր պատկառելի անուան՝ օրինակ բարի հանդիսանալով իւր հայրենակցաց. իսկ Դպրանոցի Հոգաբարձութիւնը պարտ և արժան համարէն այժմէն իսկ՝ ի նշան երախտագիտութեան իւրոյ, այդ ազգասէր բարերարի պատկերը դնել Դպրանոցի դահլիճին մէջ, որ ամենայն այցելուք գնահատեն նորա առատաձեռնութիւնը: Հատ չանցաւ ժամանակ և ահա երկրորդ բարերար Պ. Տիգրանեան Գէորգ Աւետիքեան ազնուական բժշկապետը՝ նահանձորդ լինելով բարի օրինակի՝ նոյնպէս կտակեց իւր բոլոր կարողութիւնը (40 հազարի չափ) Էջմիածնայ Ճեմարանին և բարեգործական հաստատութեանց ազգիս, ի թիւս որոց և 3000 ռուբ, յօգուտ Թուխմական Դպրանոցի վիճակիս: Տա Աստուած, որ շատեր ևս գտնուին սոցա բարի օրինակին հետևողներ և մեր վարժարանը՝ զրամական միջոցներով ճոխացած՝ կարող լինի ամենայն մասամբ ծառայել ազգի պիտոյիցը և տալ իրմէ ակնկալած պտուղները ի լուսաւորութիւն սիրելի ազգիս հայոց և ի պայծառութիւն ուղղափառ եկեղեցւոյս մերոյ սրբոյ:

Ս. Ա. Ի. Ղ.

ВЫСОЧАЙШЕЕ ПОВЕЛѢНІЕ.

ГОСУДАРЬ ИМПЕРАТОРЪ, по всеподданнѣйшему докладу Министра Внутреннихъ Дѣлъ ходатайства Патріарха католикоса всѣхъ армянъ о преобразованіи существующаго въ гор. Нахичевани на Дону армяно-григоріанскаго духовнаго училища въ семинарію, въ 27-й день Іюня 1880 года, Высочайше на сіе соизволилъ, предоставивъ Министру Внутреннихъ Дѣлъ, снабдить утвержденіемъ проектированныя Патріархомъ, по соглашенію съ Министерствомъ, основныя правила епархіальной Нахичевано-Бессарабской армяно-григоріанской семинаріи.

На подлинномъ написано: «На основаніи ст. 1004 ч. 1 т. XI Св. Зак. изд. 1857 г. и съ Высочайшаго соизволенія, послѣдовавшаго въ 27-й день Іюня 1880 г., утверждается. С.-Петербургъ, 27 Іюня 1880 г.».

Подписалъ: Министръ Внутреннихъ Дѣлъ,
Статсъ-Секретарь **Л. Маковъ**.

ПРОЕКТЪ

основныхъ правилъ епархіальной Нахичевано-Бессарабской армяно-григоріанской духовной семинаріи.

1. Епархіальная Нахичевано-Бессарабская армяно-григоріанская духовная семинарія есть среднее духовно-учебное заведеніе для приготовленія армянскаго юношества къ духовному

званію и къ занятію наставническихъ должностей въ церковныхъ армянскихъ училищахъ.

2. Семинарія учреждается въ Нахичевани на Дону и содержится: 1) средствами армянскихъ церквей Нахичевано-Бессарабской епархіи; 2) доходами съ принадлежащаго семинаріи дома бывшаго Халибовскаго училища въ Ѳеодосіи и другихъ имуществъ, и 3) пожертвованіями въ пользу семинаріи.

3. Семинарія, состоя подъ главнымъ начальствомъ Святѣйшаго Патріарха католикоса, находится въ ближайшемъ вѣдѣніи начальника Нахичевано-Бессарабской армяно-григоріанской епархіи, на котораго возлагается отвѣтственность за ея благосостояніе.

4. Начальникъ епархіи завѣдываетъ семинаріею, при содѣйствіи состоящаго подъ его предсѣдательствомъ попечительства изъ шести лицъ, избираемыхъ на три года прихожанами армянскихъ церквей въ Нахичевани и утверждаемыхъ Патріархомъ католикосомъ. Епархіальному начальнику предоставляется предсѣдательствованіе въ попечительствѣ возлагать на одного изъ духовныхъ лицъ по своему усмотрѣнію. Членамъ попечительства лично власти не присвояется.

Примѣчаніе. Порядокъ избранія членовъ попечительства прихожанами опредѣляется инструкціею, утверждаемою Патріархомъ.

5) Непосредственное управленіе семинаріею ввѣряется ректору, при содѣйствіи: 1) учебнаго совѣта и 2) хозяйственнаго правленія. Составъ и предметы занятій учебнаго совѣта и хозяйственнаго правленія опредѣляются особою инструкціею, составляемою попечительствомъ и, по представленію епархіальнаго начальника, утверждаемою Патріархомъ.

6. Ректоръ избирается попечительствомъ съ согласія епархіальнаго начальника и утверждается Святѣйшимъ Патріархомъ католикосомъ.

7. Въ Нахичевано-Бессарабской семинаріи, кромѣ ректора, состоятъ: помощникъ его, преподаватели, воспитатели, секретарь, медикъ, библіотекарь и экономъ, которые подчиняются ректору.

Примѣчаніе. Обязанности служащихъ въ семинаріи лицъ опредѣляются особою инструкціею съ утвержденія Патріарха.

8. Въ семинарію принимаются на основаніи установляемыхъ для сего начальствомъ семинаріи правилъ, лица армяно-григоріанскаго исповѣданія, безъ различія сословія и подданства, преимущественно изъ окончившихъ съ успѣхомъ ученіе въ состоящихъ при армянскихъ церквахъ и монастыряхъ учебныхъ заведеніяхъ, по предварительномъ испытаніи, производимомъ въ семинаріи.

9. Семинарія состоитъ изъ 6 классовъ, съ годичнымъ курсомъ въ каждомъ. Въ ней преподаются науки богословскія и общеобразовательныя, а именно:

1) Священная исторія и катехизисъ.
2) Богословіе догматическое, нравственное и пастырское.
3) Гомилетика.
4) Каноническое право.
5) Исторія армянской церкви.
6) Логика, психологія и педагогика.
7) Общая церковная Исторія.
8) Всеобщая исторія и географія.
9) Исторія и географія Россіи.
10) Армянская исторія и географія.
11) Армянскій языкъ съ исторіею литературы.
12) Русскій языкъ съ исторіею литературы.
13) Латинскій языкъ.
14) Французскій языкъ.
15) Математика, физика и начала космографіи.
16) Естественная исторія.
17) Церковное пѣніе.
18) Черченіе и рисованіе.

Преподаваніе въ семинаріи производится на армянскомъ языкѣ. Русскій языкъ, исторія и географія Россіи преподаются на русскомъ языкѣ.

10. Учебные предметы распредѣляются по классамъ учебнымъ совѣтомъ семинаріи. Русскій языкъ, исторія и географія Россіи обязательны для воспитанниковъ русскихъ подданныхъ.

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՔ

Թէմական Հոգեւոր Դպրանոցի Վիճակին Հայոց Նոր-Նախիջեւանի և Ռեսարաբիոյ ՌԱՐԶՐԱԳՈՅՆ կոնդ հաստատեալ է 27 յունիսի 1880 ամ.

ա. Դպրանոց Վիճակին Հայոց Նոր-Նախիջեւանի և Ռեսարաբիոյ է միջնակարգ հոգեւոր ուսումնական հաստատութիւն վասն պատրաստելոյ զմանկունս հայոց ի հոգեւոր կոչումն և ի վարումն ուսուցչական պարտաւորութեանց յեկեղեցական դպրոցս հայոց:

Բ. Դպրանոցն բացեալ լինի ի Նոր-Նախիջեւան քաղաքի և կառավարի ա) արդեամբք եկեղեցեաց Հայոց վիճակին Նոր-Նախիջեւանի և Ռեսարաբիոյ. բ) արդեամբք դպրանոցապատկան տան նախկին Խաչիկեան Ուսումնարանի որ ի Թէոդոսիա և այլոց կալուածոց և գ) կամաւոր նուիրանաք յօգուտ Դպրանոցին (*):

գ. Դպրանոցն լինելով ընդ գլխաւոր իշխանութեամբ Վեհափառ Պատրիարք Կաթողիկոսի ամենայն Հայոց, գտանի ի մերձաւոր տեսչութեան Ը-

(*) Դպրանոցն ստանայ զարգիս յարգեանց եկեղեցեաց վիճակի 4000 բուբ. ի վարձու շինուածոյն Թէոդոսիոյ 3000 բ. ի հասարակութենէ Նոր-Նախիջեւան քաղաքի 7000 բ. և ի թոշակաց աշակերտաց մինչև 4000 բուբ.

առաջնորդի վիճակին Հայոց Նոր-Նախիջևանի և Ռեսարաբիոյ, յորոյ վերայ եղեալ լինի պատասխանատուութիւն վասն նորին բարեկարգութեան:

Դ. Առաջնորդ վիճակին կառավարէ զԴպրանոցն օգնականութեամբ դասնեցելոց ընդ նորին նախագահութեամբ հոգաբարձութեան ի վեցից անձանց ընտրելոց ի ծխականաց եկեղեցեաց Հայոց Նոր-Նախիջևանի առ երիս ամս և հաստատելոց ի Պատրիարք Կաթողիկոսէն: Թեմական Առաջնորդին տուեալ լինին իրաւունք զնախագահութիւնն ի հոգաբարձութեան յանձնել միում ի հոգևորականաց ըստ իւրում նկատողութեան: Անդամք հոգաբարձութեան առանձինն առանձինն չունին զոչինչ իշխանական իրաւունս:

Ծանօթութիւն. Եղանակ և կերպ ընտրութեան անդամոց հոգաբարձութեան ի հասարակութենէ լինի ըստ հրահանգութեանն հաստատելոյ ի Վեհափառ Կաթողիկոսէն:

Ե. Ընդհանրական կառավարութիւն Դպրանոցին յանձնեալ լինի Տեսչի օգնականութեամբ ա) ուսումնական ժողովոյ և բ) տնտեսական կառավարութեան: Պաշտամունքութիւն և առարկայք պարապմանց ուսումնական ժողովոյ և տնտեսական կառավարութեան կարգաւորին առանձին հրահանգութեամբք, որք յօրինին ի հոգաբարձութենէ և ըստ առաջարկութեան Թեմական Առաջնորդին հաստատին ի Վեհափառ Կաթողիկոսէն:

Զ. Տեսուչն ընտրի ի հոգաբարձութենէ ըստ համաձայնութեան Թեմական Առաջնորդին և հաստատի ի Վեհափառ Պատրիարք Կաթողիկոսէն:

Է. Ի Դպրանոցին Նոր-Նախիջևանի և Ռեսարաբիոյ բաց ի Տեսչէ լինին. օգնական նորա, ուսուցիչք, դաստիարակք, ատենադպիր, բժիշկ, մատենադարանապետ և տնտես, որք ստորագրին Տեսչին:

Ծանօթութիւն. Պարտաւորութիւնք ծառայողաց ի Դպրանոցին կարգաւորին առանձին հրահանգութեամբք ըստ հաստատութեան Վեհափառ Կաթողիկոսին:

Ը. Ի Դպրանոցն ընկալեալ լինին ի վերայ հիման կանոնաց յօրինելոց ի տեսչութենէ Դպրանոցին անձինք ի Լուսաւորչական Հայոց դաւանութեան առանց խտրութեան կոչման և հպատակութեան և առաւել յաւարտողաց յաջողութեամբ զուսմունս իւրեանց յեկեղեցական և ի վանական դպրոցս Հայոց:

Ը. Դպրանոցն բաղկանայ ի վեցից դասարանաց միամեայ յիւրաքանչիւրում ընթացիւք: Ի նմին աւանդեալ լինին դիտութիւնք Աստուածաբանականք և հանրակրթականք և յանուանէ՝

1. Սրբազան պատմութիւն և հրահանգ Քրիստոնէական հաւատոյ.
2. Աստուածաբանութիւն կրօնական, բարոյական և հովուական.
3. Տօնարաղիտութիւն և եկեղեցական ժամակարգութիւն.
4. Կանոնական դիտութիւնք.
5. Պատմութիւն Հայոց եկեղեցւոյ.
6. Տրամաբանութիւն, հոգեբանութիւն և մանկավարժութիւն.
7. Ընդհանուր Եկեղեցական պատմութիւն.

8. Ընդհանուր պատմութիւն և աշխարհագրութիւն.
9. Պատմութիւն և աշխարհագրութիւն Ռուսիոյ.
10. Պատմութիւն և աշխարհագրութ. Հայաստանի.
11. Հայոց լեզու հանդերձ պատմութեամբ մատենագրութեան.
12. Ռուսաց լեզու հանդերձ պատմութեամբ մատենագրութեան.
13. Լատին լեզու.
14. Դաղղիարէն լեզու.
15. Թուաբանութիւն, բնագիտութիւնք և սկզբունք տիեզերագրութեան.
16. Բնական պատմութիւն.
17. Եկեղեցական երաժշտութիւն ձայնագրութեամբ և
18. Գծագրութիւն և նկարչութիւն.

Աւանդումն դասուց ի Դպրանոցին լինի ի լեզու հայոց. իսկ լեզու ռուսաց, պատմութիւն և աշխարհագրութիւն Ռուսիոյ աւանդին ի լեզու ռուսաց:

Ժ. Ռուսական առարկայք ըստ դասարանաց կարգաւորին յՌուսական ժողովոյ Դպրանոցին: Ռուսաց լեզու, պատմութիւն և աշխարհագրութիւն ռուսիոյ պարտաւորականք են վասն աշակերտաց հպատակաց Ռուսաստանի:

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Թեմական Հոգևոր Դպրանոցի Ղիմակին Հայոց Նոր-Նախիջևանի և Բեսարաբիոյ, յորինեալք ի Վերայ հիման հիմնական կանոնաց ԲՈՐՁՐԸԳՈՑՆ կամաք հաստատելոց ի 27 Յունիսի 1880 ամ.

ԳԼՈՒԽ Ա.

Հանրական կանոնք.

1. Թեմական Դպրանոցն ըստ նիւթաւոր կարողութեան իւրոյ պահէ զձրիավարժ և գիշերօթիկ աշակերտս:

2. Դպրանոցն ստանայ յաշակերտաց զորոշեալ չափաւոր տուրս, որ կարէ առաւելու կամ նուազել ըստ հանգամանաց և ըստ նկատման հոգաբարձութեան, բայց ոչ առաւել քան զյիսուն ռուբլի ի տարւոջ. իսկ աղքատք ոչ միայն ազատ են ի թոշակագրամոց, այլ և ոմանք ի նոցանէ ստանան ձրիաբար զգրեանս և զայլ ուսումնական պիտոյս, ըստ ներելոյ նիւթական միջոցաց Դպրանոցին:

3. Դպրանոցն կարէ ունել բաց ի վեցից դասարանաց և զնախակրթարան վասն նորամուտ և թերուսումն աշակերտաց:

4. Դպրանոցին աշակերտք ոչ պարտաւորեսցին ամենեքին անպատճառ և անխտիր մնանել ի կոչումն եկեղեցական և լինիլ ուսուցիչ յազգային դպրոցս, այլ յաւարտ ուսմանցն ի նմին կարեն մնա-

նել յոր և իցէ պաշտօն քաղաքական կամ շարունակել զուսմունս Իւրեանց յայլ բարձրագոյն վարժարանս:

5. Թիւ աշակերտաց Դպրանոցին որոշի ըստ չափու նիւթական միջոցաց կառավարութեան Դպրանոցին:

6. Դպրանոցն ունի զդիւանատուն, մատենադարան, թանգարան, տպարան և գրավաճառանոց:

7. Թեմական Ընդհանրդն զողով մերձաւոր իշխանաւոր Դպրանոցին հսկէ ի վերայ ճշդիւ կատարման կանոնաց Դպրանոցին:

8. Թեմական Ընդհանրդն ի նիստն զորպիսի և իցէ անկանոնութիւնս ի Դպրանոցին, անմիջապէս տայ զկարևոր համարեալ գրաւոր առաջարկութիւնս յանուն Հոգաբարձական խորհրդարանի Դպրանոցին, յայտնելով զայնմանէ կանխաւ և Ս. Հայրապետ Կաթողիկոսին:

9. Թեմական Ընդհանրդն այց կանէ Դպրանոցին յիւրաքանչիւր դէպս կարևորութեան և տեղեկանայ զատիճանէ և զգրութենէ բարեկարգութեան նորին:

10. Թեմական Ընդհանրդն տայ զերաւունս արձակուրդի պաշտօնէից Դպրանոցին, բայց ոչ աւելի քան զերկուս ամիս:

11. Թեմական Ընդհանրդն պաշտպանէ և պահպանէ զերաւունս և զարտօնութիւնս Դպրանոցին և ըստ առաջարկութեան Խորհրդարանի Հոգաբարձութեան միջնորդէ վասն վարձատրելոյ զարժանաւոր պաշտօնեայս Դպրանոցին:

ԳԼՈՒԽ Բ.

Կանոնք վասն եղանակի և կերպի ընտրութեան հոգաբարձուց Դպրանոցին և պարտուց պաշտամանց նոցին.

12. Հոգաբարձութիւնն բաղկանայ ի վեցից անձանց ընդ նախագահութեամբ Թեմական Ընդհանրդի կամ տեղակալի նորին:

13. Ընդամենք հոգաբարձութեան ընտրին հետևեալ եղանակաւ ըստ նախնեղակ կարգադրութեան Թեմական Ընդհանրդին աւագ երէցք վեցից եկեղեցեաց Նոր-Նախիջևանի հրաւիրեն զծխական ժողովուրդս ի դաւիթս եկեղեցեաց և առաջարկեն նոցա ընտրել ի միջոց իւրեանց զտասն տասն արժանաւոր և բարեյոյս պատգամաւորս վասն ընտրութեան հոգաբարձուց: Պատգամաւորքն այնոքիք, թուով 60 հոգի, ըստ հրաւիրանաց Թեմական Ընդհանրդին կամ տեղակալի նորին գումարին ի ժողով ի դահլիճ Դպրանոցին ի նշանակեալ աւուր և ընտրեն քուէարկութեամբ զվեցեսին բանիբուն և արժանահաւատ անձինս ի վարել զպաշտօն հոգաբարձութեան եռամեայ ժամանակաւ և զվեցեսին կանդիդատս վասն նոցին նոյնքան ժամանակաւ:

14. Ընտրեալ հոգաբարձուքն և կանդիդատք նոցին ընդ ձեռն Թեմական Ընդհանրդի առաջարկին ի հաստատութիւն Ս. Հայրապետ Կաթողիկոսին:

15. Կանդիդատք վարեն զպաշտամունս ի տեղի այնոցիկ հոգաբարձուաց, որք ըստ որ և իցէ յարգելք

պատճառաց չկարէն շարունակել ցլու�մն եռամեայ ժամանակին զպաշտամունս իւրեանց կամ բացակայ լինին ի քաղաքէն։

16. Յետ եռամեայ արդիւնաւոր պաշտօնավարութեան իւրաքանչիւր ոք ի հոգաբարձուաց, ըստ համաձայնութեան ընտրողաց և ըստ ցանկութեան իւրում կարէ վերստին ընտրիլ ի նոյն պաշտօն՝ այլ ոչ երրորդ անգամ առանց անցանելոյ միոյ ժամանակ միջոցի։

17. Ի վեցից անդամոց հոգաբարձութեան ընդ նախագահութեամբ Թեմական Առաջնորդին կամ տեղակալի նորին կազմի հոգաբարձական խորհրդարան, որոյ պարտաւորութիւնքն են.

ա. Ընտրել զտեսուչ, ըստ համաձայնութեան Թեմական Առաջնորդին, և առաջարկել ի հաստատութիւն Ս. Էջմիածնայ Կաթողիկոսին։

բ. Ընտրել և հաստատել զդպրական տեսչի, զուսուցիչս և զվերակացուս ըստ առաջարկութեան ուսուցչական ժողովոյ ի ձեռն տեսչի։

գ. Ընտրել և հաստատել զբժիշկ, զատենադպիր, զմատենադարանապետ և զտնտես։

դ. Որոշել և յատկացուցանել զառաջիկայս պարապմանց ուսուցչական ժողովոյ և տնտեսական կառավարութեան և զձև և զեղանակ կազմակերպութեան նոցին։

ե. Քննութիւն և լուծումն խնդրոյ յաղագս նպաստից և ռոճկաց պաշտօնէից Դպրանոցին, ևս և վարձատրութեանց նոցին վասն քրտնաջան աշխատութեանցն։

զ. Կառավարել զկալուածս և զգոյս Դպրանոցին։

է. Յողովել և մատակարարել զարդիւնս Դպրանոցին։

ը. Հսկել ի վերայ հասանելոյ արդեանց ի դէպ ժամանակի և ի վերայ արձանագրութեան ստացելոցն ի ժապաւինեալ մատեանս ի մուտս, և ծախուցն ըստ կանխահաշիւ ցուցակաց՝ ի ծախս։

թ. Յօրինումն տարեւորական կանխահաշիւ ցուցակաց մտից և ելից Դպրանոցին։

ժ. Դիւտ և քննութիւն հնարից վասն բարձրելոյ զտնտեսական մասն կառավարութեան Դպրանոցին։

ժա. Ընտել զաճուրդս վասն տալոյ կապալաւ զկալուածս Դպրանոցին հաստատելով զօրինաւոր դաշնադրութեամբ և պատրաստելոյ զամենայն պիտոյս և զհարկաւորեալ առարկայս թէ վասն Դպրանոցին և թէ վասն կալուածոց նորին։

ժբ. Քննութիւն և լուծումն խնդրագրոց յաղագս ընդունելութեան ձրիավարժ աշակերտաց ըստ առաջարկութեան ուսուցչական ժողովոյ։

ժգ. Հսկել ի վերայ գործունէութեան ծառայողաց Դպրանոցին և յառաջադիմութեան ուսանողաց ի նմին։

ժդ. Ընտրել և առաքել զոյժ յառաջադէմ աշակերտս ի Բարձրագոյն ուսումնարանս։

ժե. Քննութիւն ենթադատութեանց վասն կարեւորութեան փոփոխելոյ զյօդուածս Կանոնադրութեան և առաջարկելոյ զեզրակացութիւն իւր ընդ ձեռն Թե-

մական Առաջնորդին ի հաստատութիւն Վեհափառ Կաթողիկոսի:

ԺԸ. Վրնոութիւն ամնական և տարեւորական հաշուեցուցակաց տեսչին ի մասին ուսումնական և բարոյական դրութեան Դպրանոցին:

ԺԹ. Տուչութիւն ստորագրեալ ինքեան պաշտօնէից ժապաւինեալ հաշուեմատենից ի գործածութիւն վասն ամենայն տեսակ գործոց ըստ չափու հարկաւորութեան:

Ժ. Վրնութիւն և լուծումն խնդրոց և գանգատանաց վերաբերութեամբ ծառայողաց ի Դպրանոցին:

ԺԱ. Թոյլտուութիւն քան և ութն օրեայ արձակուրդի ծառայողաց ի Դպրանոցին:

Ի. Վրնութիւն և լուծումն խնդրոց, որ վասն արտաքսման անուղղայ աշակերտաց ի Դպրանոցին, ըստ առաջարկութեան տեսչին:

ԻԱ. Ստուգութիւն ժապաւինեալ հաշուեմատենից Դպրանոցին ի վերջ իւրաքանչիւր ամսոյ և տարւոյ, այլ և անժամանակ և ի յանկարծակի դէպս, ևս և տպագրութիւն հաշուոց Դպրանոցին յընդհանուր գիտութիւն:

ԵՒ ԻԲ. Մինչնորդութիւն առ Թեմական Առաջնորդն վասն վարձատրութեանց արժանաւոր պաշտօնէից Դպրանոցին:

18. Խորհրդարանն գումարի մի անգամ յամսեան անպատճառ, իսկ ի կարեւոր դէպս և ի պահանջել հարկին և արտաքոյ կարգի, ըստ հրաւիրանաց Նախագահին:

19. Յիւրաքանչիւր գումարման խորհրդարանին պարտին ներկայ գտանիլ բաց ի նախագահէն անպատճառ գոնէ երիք անդամք հոգաբարձութեան, առանց որոյ ոչ կարէ կայանալ ժողովն:

20. Բացակայ եղեալ անդամք խորհրդարանին չկարին պահանջել գրոփոխումն կարգադրութեանց եղելոց առանց նոցա:

21. Իւրաքանչիւր անդամ ունի զերաւունս առաջն առնելոյ խորհրդարանին զկարծիս իւր յաղագս բարեկարգելոյ զայս կամ զայն մասն վարչութեան Դպրանոցին, զայսպիսի կարծիս պարտի գրաւորապէս մատուցանել աւուրբք ինչ յառաջ քան զժողովն ի ձեռն նախագահի խորհրդարանին:

22. Զամենայն թուղթս եկեալս յանուն խորհրդարանին ստանայ նախագահն և տայ ըստ պատկանելութեանցն յուսուցչական ժողովն կամ ի տնտեսական կառավարութիւնն. իսկ զելեալ թուղթս ստորագրէ նախագահն կամ ըստ նորին գիտութեան մինն յանդամոց խորհրդարանին:

23. Զամենայն խնդիրք և վճիռք խորհրդարանին պարտին արձանագրիլ ի մատեանս օրագրութեան և ստորագրին ի նախագահէ և ի ներկայ եղեալ անդամոց:

24. Զամենայն խնդիրք կամ վճիռք լուծանին ըստ առաւելութեան ձայնից, ի դէպս հաւասարութեան ձայնից ծանրակշիռն է կողմն նախագահին:

25. Յընտրութեան պաշտօնէից կամ ի մեծակշիռ խնդիրս ձայնք ժողովին քուէարկութեամբ:

26. Խորհրդարանն եթէ ոչ յիւրաքանչիւր գումարման իւրում, այլ անշուշտ ի կարևոր դէպս հրաւիրէ ի ժողով զեպիսկոպոսն Դպրանոցին և ի բացակայութեան զօգնական նորա և ունի զնա ինքեան գործակից յամենայն դէպս:

27. Խորհրդարանն ամի ամի առաջի առնէ զմանրամասն հաշիւ կառավարութեան Դպրանոցին ըստ ամենայն մասանց առ Թեմական Առաջնորդն, որ մատուցանէ զայն Ս. Հրափառ Պատրիարքին:

ԳԼՈՒԽ Գ.

Մասն ուսումնական.

28. Ուսումնական մասն Դպրանոցին կառավարի ի ձեռն տեսչի, օգնականի նորին, ուսուցչաց, վերակացուաց և ուսուցչական ժողովոյ:

ԳԼՈՒԽ Դ.

Յաղագս Տեսչի.

29. Տեսուչն է մերձաւորագոյն կառավարող Դպրանոցին, հսկող և պահպանող նկրքին բարեկարգութեան և յառաջադիմութեան նորին ըստ ամենայն մասանց:

30. Տեսուչն ընտրի յատկապէս յուսումնական և յարժանաւոր եկեղեցականաց աւարտելոց զընթացս ուսմանցն ի Ն՚եմարանի Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի և կամ յայլ Բարձրագոյն ուսումնարանս: Ի կարևոր դէպս կարէ վարել գպաշտօն տեսչի և աշխարհական, նոյնպէս աւարտեալ զուսումն ի Բարձրագոյն ուսումնարանս տէրութեան:

31. Տեսուչն պարտաւոր է ուսուցանել ի նմին Դպրանոցի զմի միայն ի նշանաւոր առարկայից ուսուցչական ոճկաւ, և այն սակաւ քանակութեամբ դասուց:

32. Տեսուչն ի գումարման խորհրդարանին հոգաբարձութեան հրաւիրեալ լինի ի կարևոր դէպս ի ժողով և լինի գործակից նմին:

33. Տեսչին՝ իբրև մերձաւորագոյն կառավարչի Դպրանցին ստորադրին օգնական նորին, ուսուցիչք, դաստիարակք և վերակացուք:

34. Տեսուչն փոյթ յանձին ունի զամենայն մասանց նկրքին բարեկարգութեան Դպրանոցին և մանաւանդ հսկէ ի վերայ բարոյական և բնական դաստիարակութեան աշակերտաց: Նա պահպանէ զսահմանեալ կարգս, պահանջէ յուսուցչաց և ի վերակացուաց և յայլոց ծառայողաց զճիշդ կատարումն պարտուց իւրեանց և առ հասարակ բառնայ զամենայն անկարգութիւնս և ի կարևոր դէպս ծանուցանէ զայնմանէ խորհրդարանի հոգաբարձուաց:

35. Տեսուչն պատժէ զյանցաւոր աշակերտս վասն ածելոյ զնոսա յուղղութիւն, իսկ վասն արտաքսելոյ

զնոսա ի Դպրանոցին խորհի ընդ. ուսուցչական ժողովոյ և առաջարկէ խորհրդարանի հոդաբարձուաց:

36. Տեսուչն բնակի ի Դպրանոցին, իսկ եթէ անհնարին լցէ այս՝ արտաքոյ նորա, և յայնժամ ստանայ նա զսահմանեալ վարձադրամն վասն բնակարանի և զվառելիս:

37. Տեսուչն տայ ենթադրեալ ինքեան պաշտոնէից Դպրանոցին ի ժամանակս ուսման զարձակուրդ ոչ աւելի քան զաւուրս չորեքտասան ի դէպս յոյժ կարևորս, և այն մի անգամ ի տարւոջ:

38. Տեսուչն հաղորդէ խորհրդարանի հոդաբարձութեան զամսական և զտարեւորական տեղեկութիւնս զյառաջադիմութենէ և զվարուց աշակերտաց:

39. Տեսուչն ստանայ յետ տարեկան հաշիւքննութեանց՝ զարձակուրդ քսան և ութն օրեայ ժամանակաւ, թոյլտուութեամբ խորհրդարանի հոդաբարձութեան, բայց ոչ աւելի քան զերկուս ամիս. իսկ առաւել ժամանակաւ հրամանաւ և թոյլտուութեամբ թեմական Առաջնորդին:

40. Ի դէպս ժամանակաւոր բացակայութեան տեսչին, զպաշտօն նորա վարէ օգնական տեսչի. իսկ յորժամ տեսուչն բողոքովն թողու զպաշտօն իւր, յայնժամ օգնական նորա, մինչ ցընտրութիւն նորոյ տեսչի, կատարէ զնոյն պաշտօն հանդերձ ամենայն իրաւամբք և պատուութեամբք և ստանայ զկէս ռոճիկ տեսչական:

41. Տեսուչն վարէ զպաշտօն նախագահի յուսուցչական ժողովոյ:

42. Տեսուչն, բաց ի տեսչական պարտաւորութենէն, չկարէ ունել զայլ որ և է պաշտօն արտաքոյ Դպրանոցին:

ԳԼՈՒԽ Ե.

Յաղագս օգնականի տեսչի.

43. Օգնականն տեսչի ընտրի յուսուցչական եկեղեցականաց կամ աշխարհականաց աւարտելոց զուսումն իւրեանց ի Հեմարանի Ս. Էջմիածնի և կամ ի Բարձրագոյն ուսումնարանս տէրութեան:

44. Օգնական տեսչի ընտրի յուսուցչական ժողովոյ և ընդ ձեռն տեսչի առաջարկի ի հաստատութիւն խորհրդարանի հոդաբարձուաց:

45. Օգնականն տեսչի գործակից է տեսչին յամենայն մասունս ներքին բարեկարգութեան Դպրանոցին և մանաւանդ դասատիարակութեան աշակերտաց:

46. Յատկապէս ընդ տեսչութեամբ և խնամակալութեամբ օգնականի տեսչի գտանին մատենադարանն և թանգարանն, նա հսկէ ի վերայ ուսումնական պարագայից և այլոց պիտոյից աշակերտաց և ի վերայ ամենայն իրեղինաց Դպրանոցին առհասարակ:

47. Ի բացակայութեան տեսչին՝ օգնականն նորա նախագահ լինի յուսուցչական ժողովի և միանգամայն վարէ զտեսչական պաշտօնն համաձայն 40-րդ յօդսոյն կանոնադրութեան:

48. Օգնականն տեսչի ուսուցանէ ի նմին Դպրանոցի և զառարկայ մի առանձին ուսուցչական ոճիկաւ։

49. Օգնականին դրած է փոյթ ունել գնալոյ անպակաս աշակերտաց ի դասարանս, իմանալ զպատճառս բացակայութեան նոցա, հսկել արթնութեամբ ի վերայ վարուց և գնացից նոցա ի Դպրանոցին և արտաքոյ նորին, որպէս և ի վերայ մաքրութեան և առողջութեան նոցա։

50. Դաց յայնցանէ օգնականին պարտք են միտ դնել զի բաշխումն ժամանակին ի Դպրանոցի անդ ճիշդ պահեսցի, վարժապետքն ըստ իւրաքանչիւր սահմանեալ ժամանակաց գայցեն ի դասարանս, ըստ պատշաճի վարիցեն ընդ աշակերտս, մի խոտորիցին ի սահմանեալ նախագծէ դասուց և ըստ ամենայն դասարանաց ի դէպ ժամու աւարտիցեն զընթացս դասախօսութեան սահմանեալս ի նախագծի։

51. Նորա պարտք են փոյթ ունել և ընդ այն զի մի ինչ լինիցի պակասութիւն ի պիտոյս և յուսումնական իրս դասարանաց, զորմէ ի դէպ ժամու ծանուցանէ տեսչին։

52. Օգնական գոլով տեսչին ի հոգալ զի ճշդիւ կատարեսցին ամենայն կանոնք, կարգադրութիւնք և կարգ հաստատեալ ի Դպրանոցին, իրաւունս ունի նա յուշ ածել պաշտօնէից Դպրանոցին զպարտս նոցա, եթէ պակասիցին երբէք ի նոսին, և եթէ ազդարարութիւնք իւր անպտուղ մնայցեն տալ զայնմանէ տեղեկութիւն տեսչին։

53. Օգնականն յետ ի դրած արկանելոյ զամենայն հնարս եղեալս ի ձեռս իւր յուղղութիւն աշակերտաց, զանուղղայիցն կամ զայնցանէ, որք ծանուցեալք լինէ յանցուցեալք լցեն առաջի առնէ տեսչին։

54. Նա կազմէ զշաբաթական, զամսօրեայ և զտարեկան տեղեկութիւնս զյառաջադիմութենէ և զվարուց աշակերտաց և առաջի առնէ տեսչին։

55. Ի բացակայութեան օգնականի տեսչին, ըստ պաշտօն նորա վարէ մինն յուսուցչաց, ըստ նշանակութեան տեսչի. իսկ յորժամ բոլորովին թողուն զպաշտօն իւր, յայնժամ ընտրի և հաստատի փոխանակ նորին այլ ոք ի խորհրդարանէ հոգաբարձուաց։

ԳԼՈՒԽ Զ.

Յաղագս Վերակացուաց.

56. Թեմական Դպրանոցն ունի զվերակացուս, թիւ որոց որոշի ըստ չափու հարկաւորութեան։

57. Վերակացուք նշանակին յուսումնական անձանց, աւարտելոց զուսումն իւրեանց ի միջնակարգ ուսումնարանս Տէրութեան և կամ յայլոյն թեմական Դպրանոցս. իսկ ի հարկաւոր դէպս և այլք ոմանք բարեբարոյք և առաքինիք, հմուտք ի լեզուս հայոց և ռուսաց։

58. Վերակացուս ընտրէ ուսուցչակաց ժողովն և ընդ ձեռն տեսչի առաջարկէ ի հաստատութիւն

խորհրդարանին հոգաբարձուաց, զկնի նախընթաց ե-
ռամեայ փորձոյ կատարման այնր պաշտման։

59. Վերակացուք վարին առանձին հրահանգաւ,
զոր յօրինէ տեսուչն, և են առ հասարակ օգնականք
տեսչի և գործակիցք յամենայն մասունս նեղբին բա-
րեկարգութեան Դպրանոցին և մանաւանդ դաստի-
արակութեան աշակերտաց։

60. Վերակացուք զժամանակաւոր 14-օրեայ
արձակուրդն սահման թոյլատուութամբ տեսչին։

61. Ի դէպս բացակայութեան վարժապետաց՝
վերակացուք փոխարինեն զնոսա. իսկ ի դէպս երկա-
բաւաբացակայութեան վարին զպաշտօն նոցա առանձին
վարձատրութեամբ։

ԳԼՈՒԽ Ի։

Յաղագս ուսուցչաց։

62. Ուսուցիչք Դպրանոցին ընտրին յուսումնա-
կանաց աւարտելոց զուսումն իւրեանց ի բարձրագոյն
կամ ի միջնակարգ ուսումնարանս Տէրութեան, ի
յոյժ կարեւոր դէպս, իբրև ժամանակաւոր բացառու-
թիւն կարելի է յանձնել զպաշտօն ուսուցչի այս
կամ այն առարկայի և այնպիսի անձանց, որք թէ
և չունեցին զվկայական բարձրագոյն և միջնակարգ
ուսումնարանաց, բայց պարտաւորեսցին յընթացս
վեցից ամսոց մատուցանել անպատճառ զվկայական
ուսուցչութեան յանձնեալ ինքեանց ի դաստատու-
թիւնն առարկային։

63. Ուսուցիչք եկեղեցական առարկայից որ է
Աստուածաբանութիւն, Եկեղեցական պատ-
մութիւն Հայոց, պարտին լինել յեկեղեցականաց ի
վարդապետաց և ի քահանայից անկախք, նոյնպէս
յաւարտողաց զուսմունս իւրեանց ի բարձրագոյն կամ
ի միջնակարգ ուսումնարանս Հայկականս կամ արքու-
նականս, և կամ յանգիտաց, որք յօրինեալ և ի
լոյս ընծայեալ իցեն ի Հայ լեզու հեղինակութիւն
կամ թարգմանութիւն ինչ եկեղեցական առարկայից ի
հրահանգ դաւանութեան Հայաստանեայց եկեղեցւոյ։

64. Ուսուցիչք ճայնագրութեան անպատճառ,
նկարչութեան, գծագրութեան և մարմնամարզութեան
կարեն լինել և առանց վկայականի բարձրագոյն ու-
սումնարանաց։

65. Ուսուցիչս ընտրէ ուսուցչական ժողովն և
ընդ ձեռն տեսչի առարջարկէ ի հաստատութիւն
խորհրդարանի հոգաբարձուաց։

66. Ուսուցիչք ընկալեալ լինին նախընթաց փոր-
ձառութեամբ, առնելով զերիս դասախօսութիւնս իւ-
րաքանչիւր ըստ իւրում առարկայի, ի դէպս քանի
մի ցանկացողաց վասն միևնոյն առարկայի՝ նշանակի
ի մէջ նոցա մրցողական դասախօսութիւն և ապա
ընտրի արժանաւորագոյնն։

67. Մի ուսուցիչ կարէ ուսուցանել ոչ աւելի
քան զերիս առարկայս։

68. Ուսուցիչն կարէ ընդմիջել զդասախօսու-
թիւն իւր միմիայն վասն պատճառի հիւանդութեան,
զորմէ և ծանուցանէ գրով տեսչին, ի ժամանակի

հիւանդութեան ուսուցիչն սոսնայ զաձիկ իւր միմիայն յընթացս միոյ ամսոյ, վաւերացուցանելով զհիւանդութիւն իւր վկայականաւ բժշկի Դպրանոցին:

69. Ամենայն ուսուցիչ պարտի ուսուցանել զնուն առարկայ ըստ նախագծին յօրինելոյ յուսուցչական ժողովոյ ի սկզբան ուսումնական տարւոյ, փոյթ ունելով աւարտել զայն ի սահմանեալ ժամանակին, բայց զի և աշակերտք քաջուսումն եղեն յամենայնի:

70. Ի լրանալ ուսումնական տարւոյ, ուսուցիչք կարեն յայտնել ուսուցչական ժողովոյ զկարծիս իւրեանց զփոփոխութեանց, զորս փորձով համարիցեն կարեւոր առնելոյ ի նախագծին կամ յոճն ուսման առարկայից իւրեանց:

ԳԼՈՒԽ Ը.

Յաղագս ուսուցչական ժողովոյ.

71. Ուսուցչական ժողովն կազմի ընդ նախագահութեամբ տեսչի, յօգնականէ, յուսուցչաց և ի վերակացուաց,

72. Ի բացակայութեան տեսչի զպաշտօն նախագահի ժողովոյն վարէ օգնականն:

73. Ուսուցչական ժողովն գումարի միանգամ ի վերջ իւրաքանչիւր ամսոյ. իսկ ի կարեւոր դէպս կարէ գումարիլ և արտաքոյ կարգի ըստ հրաւիրման նախագահի ժողովոյն:

74. Յիւրաքանչիւր գումարման ժողովոյն բացի նախագահէ պարտի ներկայ գտանիլ զէթ մեծագոյն մասն ուսուցչաց:

75. Ուսուցիչք ոչք ոչ կարեն գտանիլ ի գումարման ժողովոյն, պարտին նախապէս ծանուցանել զայնմանէ նախագահին: Պատճառք բացակայութեան կարեն լինել հիւանդութիւն կամ այլ ծանրագոյն հանգամանք: Բացակայ անդամք չկարեն պահանջել զփոփոխումն կարգադրութեանց եղելոց առանց նոցա:

76. Պարտաւորութիւնք ուսուցչական ժողովոյն են:

ա. Յօրինումն նախագծից առարկայից դասաւորութեան և կամ քննումն և փոփոխումն հնոյն վասն իւրաքանչիւր ամի:

բ. Ընտրութիւն դասագրոց և այլ ուսումնական պարագայից, նմանապէս ընտրութիւն զրեանց վասն մատենադարանի, և յօրինումն կանոնագրութեան վասն կառավարութեան և պահպանութեան նորա:

գ. Կարգումն յանձնաժողովոյ վասն առանձին քննութեան մանկավարժական խնդրոց:

դ. Որոշումն ժամանակի և եղանակի վասն տարեկան հարցաքննութեանց աշակերտաց և կարգումն յանձնաժողովոյ վասն քննութեան իւրաքանչիւր առարկայի յուսուցչէ նոյն առարկայի և յերկուց այլոց ուսուցչաց:

ե. Ընդունելութիւն առ հաստակ աշակերտաց, փոխադրութիւն նոցա զկնի տարեկան հարցաքննութեանց ի միոյ դասարանէ ի միւսն, կամ թողումն նոցա ի նմին դասարանի ի դէպս ներկայս կանոնագրութեամբս այսուիկ:

Ը. Կազմութիւն հանրական ցուցակաց յետ հարցաքննութեանց:

Է. Որոշումն պարգևաց յաղագս ընտրելոցդն և յառաջադէմ աշակերտաց:

Ը. Որոշումն ասպիճանի վկայագրոց վասն տալոյ աշակերտաց աւարտելոց զամբողջ ուսումն:

Ը. Վիճութիւն և որոշումն խնդրոյ վասն առաքելոյ զոյժ յառաջադէմ աշակերտս ի բարձրագոյն ուսումնարանս և առաջարկելոյ զայնմանէ խորհրդարանի հոգաբարձուաց:

Ժ. Վիճութիւն շաբաթական և ամսական ցուցակաց յառաջադիմութեան աշակերտաց:

Ժա. Որոշումն խնդրոյ վասն արտաքսելոյ զանուղղայս յաշակերտաց ի Դպրանոցէն և առաջարկելոյ ի հաստատութիւն խորհրդարանի հոգաբարձուաց:

ԺԲ. Կարգումն կանոնաց վարուց աշակերտաց բնակելոց ի Դպրանոցի և արտաքոյ նորին:

ԺԳ. Կարգումն կանոնաց յաղագս պատժողական բարեկարգութեան յանցաւոր աշակերտաց:

ԺԴ. Յաւելումն թուոյ դասուց ուսուցչաց՝ ըստ ցեալ կանխաւ զհամաձայնութիւն խորհրդարանի հոգաբարձուաց:

և ԺԷ. Այլոց խնդիր վերաբերեալ ուսումնական մասին Դպրանոցի:

77. Ի Նիսան ուսուցչական ժողովոյն անդամք առաջարկեն զկարծիս իւրեանց բերանացի, բայց կարեն մատուցանել և զգրաւոր կարծիս ի ձեռն նախագահի, միայն աւուրքք ինչ յառաջ քան զնիսան:

78. Ամ՛ՀԻՆՔ ուսուցչական ժողովոյն կամ ընդհանուր համաձայնութեամբ ներկայ գտեալ անդամոց և կամ բազմութեամբ ձայնից. իսկ ի դէպս հաւասարութեան ձայնից նախագաս համարի կարծիքն, որում մասնակցի նախագահն:

79. Ամ՛ԹԻՒ դասուց յաւուրս ուսման վասն իւրաքանչիւր առարկայից և զբաժանումն նոցին ըստ դասարանաց որոշէ ի սկզբան ուսումնական ամին ուսուցչական ժողովն յառանձին ցուցակի:

80. Մինն յուսուցչաց Դպրանոցին վարէ զպաշտօն գործավարի ժողովոյն ըստ ընտրութեան իւրեանց:

ԳԼՈՒԽ Թ.

Յաղագս այլոց պաշտօնէից Դպրանոցին.

81. Այլք ի պաշտօնէից Դպրանոցին են մատենադարանապետ, բժիշկ և ատենադպիր, որք հաստատին ի պաշտամունս իւրեանց ի խորհրդարանէ հոգաբարձուաց:

82. Պարտաւորութիւնք մատենադարանապետի են. պահել ի բարեկարգութեան զմատենադարանն և զԹանգարանն Դպրանոցի, ունել գկանոնաւոր ցուցակս մատենից և այլոց իրաց, անկորուստ պահպանել զգրեանս և զերեղէնս Թանգարանի, տալ աշակերտաց և ուսուցչաց զգիրս ըստ կանոնադրութեան յօրինելոյ յուսուցչական ժողովոյ,

որ վասն կառավարութեան և պահպանութեան մասնաղդարանի:

83. Մասնաղդարանապետն ի ձեռն տեսչի մատուցանէ խորհրդարանի հոդարարձուաց զատրեկան հաշիւն:

84. Պարտաւորութիւն բժշկի է յայց կալանել Դպրանոցին երկիցս յամեան, փոքթ ունել զի ի Դպրանոցին ամենայն ինչ նպաստաւոր ի ցեղջութեան աշակերտաց ըստ ամենայն մասանց:

85. Բժիշկն, ըստ հրաւիրման տեսչի, օգնականի կամ միւսմ ի վերակացուաց, յանախեալ դիպուածս ի Դպրանոցին, պարտի փութալ անյապաղ հասանել յօգնութիւն:

86. Բժիշկն զամենայն գիտողութիւնս իւր, ըստ պարտուց պաշտաման, առաջի առնէ տեսչին:

87. Ի կարիւր դէպս բժիշկն հրաւիրի ի գումարումն խորհրդարանի ի խորհրդածութիւն զերաց վերաբերելոց պաշտաման նորա:

88. Բժիշկն պարտաւոր է զարմանել ճրիտաբար և զամենայն պաշտօնեայս և զսպասաւորս բնակեալս ի Դպրանոցին և զճրիտարարժ աշակերտս:

89. Մանեղպիկն կատարէ զանանկան զրուածս խորհրդարանին, և ունի զտեսչութիւն գիւանական գործոց Դպրանոցին:

90. Մանեղպիկն պարտք են կազմել զատնաղրութիւնս խորհրդարանին, կատարել զպաշտօնական նամակագրութիւնս տեսչին և առ հասարակ

առնել զայն ամենայն որ ինչ անկ է գործոց խորհրդարանին:

ԳԼՈՒԽ Ժ.

Յաղագս ընդունելութեան աշակերտաց:

91. Ի Դպրանոցն ընդունին հայկազն մանկունք յամենայն դասակարգէ և ի վիճակէ առանց խտրութեան հպատակութեան:

92. Մանկունք պարտին պատրաստեալ լինել կամ ի տողին վարժարանս և կամ ի տան իւրեանց, զոր զկնի հարցաքննութեան կարեն մտանել ի զանազան դասարանս ըստ չափու գիտութեան իւրեանց, իսկ անպատրաստք մտանեն ի նախակրթարան:

93. Յանկացողք ուսանիլ զՄատուածաբանական գիտութիւնս կարեն մտանել ուղղակի ի հինգերորդ դասարան, եթէ ուսարտեալ իցեն զուսումն ի միւս ուրեք ի միջնակարգ ուսումնարանս տեղութեան:

94. Խնդրագիրք զընդունելութենէ տուեալ լիցին տեսչին ի 1 Յուլիսի ց15 Օգոստոսի. ընդ խնդրագրոյ մատուցանին ծննդական և պատուաստի վկայականք, ևս և վասն ուսանց և բարի վարուց. իսկ ցանկացողք լինել ճրիտարարժ և զվկայականս վասն չքաւորութեան:

95. Հասակ նորամուտ աշակերտաց որոշի վասն առաջին դասարանի ի 10 ց14 ամն:

96. Ի լրումն սահմանեալ թուոյ աշակերտաց

ընկալեալ լինին այնոքիկ ոլք առաւել յառաջադէմք իցեն և հալուստք գիտութեամբք վասն միևնոյն դասարանի:

97. Աշակերտք ճան յիւրաքանչիւր դասարանի ամ մի, բայց կարեն ճեալ իբրև բացառութիւն և երկու ամ ըստ յարգելի պատճառաց և ըստ լուծման խորհրդարանի հոգաբարձուաց:

98. Հանդերձք ամենայն աշակերտաց պարտին լինել մի օրինակ և միաձև ըստ ընտրութեան հոգաբարձական խորհրդարանի:

ԳԼՈՒԽ ԺԱ.

Կէրպ և եղանակ դասախօսո-ՈՒսանց է Դպրանոցին.

99. Դասախօսութիւնք ի Դպրանոցին լինին ի լեզու հայոց. իսկ լեզու ռուսաց, պատմութիւն և աշխարհագրութիւն ռուսիոյ ի լեզու ռուսաց:

100. Ուսումն տևէ յընթացս ողջոյն տարւոյ, բաց ի Կիւրակէից և ի գլխաւոր Եկեղեցական և Կայսերական տօնից և յաւուրց խոստովանութեան և հաղորդութեան:

101. Աւուրք արձակուրդի են ձմեռնային՝ ի 25 Դեկտեմբերի ց10 Յունվարի և ամառնային՝ ի 15 Յունիսի ց15 Օգոստոսի:

102. Տարեկան հարցաքննութիւնք սկսանին ի 15-էն Մայիսի:

103. Ի ցոյց յառաջադիմութեան աշակերտաց ի գործ դնին յառաջակայ նշանքդ. 5 — գերազանց, 4 — յոյժ գովելի, 3 — գովելի, 2 — չափաւոր և 1 — թոյլ:

104. Հարցաքննութիւնք ընդունելութեան աշակերտաց և տարեկանքն լինին ի յանձնաժողովս կարգեալս յուսուցչական ժողովոյ և բաղկացեալս ի վարժապետէ քննելի առարկային և յերկուց այլ վարժապետաց: Տեսուչն և օգնականն միշտ ներկայ գտանին ի ժամ հարցաքննութեանց:

105. Թուանշանք տարեկան հարցաքննութեանց նշանակեալ լինին միջինք ըստ իւրաքանչիւր առարկայի, ոլք ստացեալք լինին ի տարեկան և հարցաքննական թուանշանաց ուսուցչի և յանձնաժողովոյ, այլ և տեսչի և օգնականին, եթէ ներկայ գտանիցին:

106. Վասն փոխադրելոյ ի միոյ դասարանէ ի միւսն՝ յորժամ աշակերտն ունեցի յոլ և իցէ առարկայէ զմի կամ զերկու միջին թիւ 2, յայնժամ տուեալ լինի նմա վերաքննութիւն ի միոյն կամ յերկուց առարկայի. իսկ յորժամ ունեցի աւելի քան զնշանակեալ թիւն 2, ոչ կարէ աշակերտն փոխադրեալ լինել ի հետևեալ բարձրագոյն դասարանս:

107. Զկնի տարեկան հարցաքննութեանց գերազանցեալքն յառաջադիմութեամբ և գովելի վարուք վարձատրին ըստ պատշաճին որոշմամբ ուսուցչական ժողովոյ. իսկ ուսումնասէրք ստանան զվկայականս նոյն կարգաւ:

ԳԼՈՒԽ ԺԱ.

Յաղագս բարոյական և բնական դասդիպարակութեան ի Դպրանոցին.

108. Դպատակ բարոյական դաստիարակութեան ի Դպրանոցին է տալ կանոնաւոր կրթութիւն բարուց աշակերտացն. այսինքն՝ զի զարդասցի ի նոսա հաստատ և անարատ Աստուածապաշտութիւն, սէր և մեծարանք առ Հայաստանեայց եկեղեցի և առ կարգս և արարողութիւնս նորին, հաւատարմութիւն առ տէրութիւնն, հնազանդութիւն առ օրէնս, պատկառանք առ ծնողս և իշխանաւորս և սէր առ ամենեսին։

109. Օր ամենայն ի սահմանեալ ժամս աշակերտքն կատարեն զաղօթս ի սկզբան և յաւարտ ուսման։ Օրընթերցումն աղօթից առնեն ինքեանք աշակերտք։

110. Յաւուրս Կիւրակէից և տօնից աշակերտք նախ՝ լսեն զմեկնութիւն Աւետարանի և առաքելական թղթոց աւուրն և զպատմութիւն տօնին և ապա գնան յեկեղեցի, ուր ինքեանք առնեն զդպրութիւն և ապաստարեն սրբոյ սեղանոյն։ Միանգամայն պարտին աշակերտք գէթ երիցս յիւրաքանչիւր տարւոջ ի տօնս Ս. Ծննդեան, Ս. Յարութեան և ի տաղաւարի Խաչվերացի հաղորդել Ս. Մարմնոյ և Արեան Տեառն։

---

111. Ուսուցչական ժողովն փոյթ ունի կազմել դպատժողական կանոնս վասն ուղղութեան բարուց յանցաւոր աշակերտաց հանդերձ մեծաւ ընտրութեամբ պատժոցն։ Առհասարակ պատժողական միջոցք պարտին միշտ հեռի լինել ի չափազանց սաստկութենէ և ի նուաստացուցիչ հանդամանաց։

112. Գործադրութիւն պատժոց պարտի միշտ համեմատ լինել հասակի, սկզբան դաստիարակութեան և բուսոյ բարուց յանցաւորին։

113. Ծանրագոյնն ի պատիժս Դպրոցին է արտաքսիլն աշակերտի, զոր միայն ի դէպս յոյժ անտանելիս պարտ է ի գործ դնել խակոյն՝ յորում և իցէ ժամանակի ուսումնական տարւոյ։

114. Ի զարդացումն առողջութեան և ի յաւելումն մարմնական ուժոյ աշակերտաց լինին ի Դրպրանոցի ընդ ձեռամբ առանձին վարժապետի և ընդ հսկողութեամբ բժշկի Դպրանոցին, մարմնակրթութիւնք և զբաղմունք ի պարտիզի և խաղք կանոնաւորք և յարմարք։

115. Ուսումն հայկական եկեղեցական ձայնագրութեան, որ զարդացուցանէ զճաշակ մարդոյ, և հեռի առնէ ի դատարկութենէ և յայլոց վնասակար ախորժակաց, ոչ միայն պարտաւորական և անհրաժեշտ է, այլ և խրախուսելի։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Յաղագս պնդէական մասին Դպրանոցին.

116. Տնտեսական մասն Դպրանոցին կառավարի ընդ ձեռն անդամոց հոգաբարձութեան գործակցութեամբ առանձին տնտեսի:

117. Տնտեսն ընտրի և հաստատի ի պաշտամանն ի խորհրդարանէ հոգաբարձութեան:

118. Տնտեսին կարեն յանձնել հոգաբարձուք զպարտաւորութիւնս յատկացեալս ի գ, է և ը պարբերութիւնս 17-րորդ յօդուածոյ սոյն կանոնագրութեան:

119. Տնտեսին պարտք են ըստ յանձնարարութեան հոգաբարձուաց վարձել զծառայս, ի մաքրութեան պահպանել զկալուածս Դպրանոցին և զԴրպրանոցն, գնել զկարեւոր նիւթեղէնս, զվառելիս և զայլ ամենայն:

120 Տնտեսն վարէ զառանձին ժապաւինեալ հաշուեմատեան մտից և ծախուց արարելոց նոցաւ ըստ յանձնարարութեան անդամոց հոգաբարձութեան և խորհրդարանի:

121. Տնտեսն պարտի լինել անձն աշխարհական:

ԳԼՈՒԽ ԺԴ.

Յաղագս էրա-անց և արքեպ-ընէանց Դպրանոցին.

122. Դպրանոցն ունի զկնիք ձևակերպութեամբ արքունական արծուէնշանի և մակագրով „Կնիք Թե-

մական Հոգևոր Դպրանոցի վեհակին Հայոց Նոր Նախիջևանի և Ռուսարարիոյ“:

123. Դպրանոցն ազատ է ի հատուցմանէ սակի առաքման թղթոց և ծրարից վերաբերելոց առ գործս իւր և կնքելոց կնքով նորին:

124. Շինուածք յորում զետեղի Դպրանոցն ազատ է ի հատուցմանէ ամենատեսակ քաղաքական, արքունական և երկրական հարկադրամոց ըստ տրամադրութեանց քաղաքական օրինաց:

125. Աշակերտք աւարտեալք զընթացս ուսմանցն ի Դպրանոցին և ստացեալք անտի զվկայականս, ունին զերաւունս ուսուցչութեան յազգային դպրոցս, նոյնպէս և առնել զուսուցչութիւն կրօնի և լեզուի հայոց յարքունական դպրոցս,

126. Աշակերտք աւարտեալք զընթացս ուսմանցն ի Դպրանոցին վայելեն զարտօնութիւնս ի զինուորագրութեան ըստ կանոնադրեալ իրաւանց:

127. Իրաւունք և արտօնութիւնք պաշտօնէից Դպրանոցին որոշեցին առանձին կարգադրութեամբ հաստատեցելովք ի ԲԱՐՁՐԱԳՈՅՆ իշխանութենէ ըստ առաջարկութեանՎ Եկափառ Կաթողիկոսի:

ԳԼՈՒԽ ԺԵ.

Յաղագս պէտական ծախս-ց Դպրանոցին.

128. Ծախք Դպրանոցին են.

ա. Պահպանութիւն և բարեկարգութիւն ամենայն շինուածոց Դպրանոցին և ամենայն անշարժ կալուածոց նորին, նոր շինուածք և կարկատանք,

յաւելուածք ի շինուածս, պահպանութիւն նոցին ի հրդեհէ և այլն։

Է. Օժանդակութիւն չքաւոր աշակերտաց կամ ուսումնական պարագայիս և կամ գրամովք։

Գ. Առաքումն որդեգրաց յառաւել բարձրագոյն ուսումնարանս։

Դ. Ռոճիկք ամենայն պաշտօնակատարաց և սպասաւորաց։

Է. Պահպանութիւն մատենադարանի և թանգարանի, գիւանատան, գրավաճառանոցի և այլն։

Ը. Վառելիք և լուսաւորութիւն։

և Է. Անակնկալ ծախք։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Յաղագս ռոճկաց պաշտօնակատարաց.

129. Ռոճիկք պաշտօնակատարաց լինին տարեկան և հատուցանին ամսոյ ամիս, սկսեալ յօրէ մտանելոյ ի պաշտօն, իսկ սպասաւորաց ռոճիկք լինին ամսական։

130. Ռոճիկք ուսուցչաց սահմանին վասն իւրաքանչիւր տարեկան դասու 50 րուբ., իսկ ուսուցչաց նախակրթութեան, գծագրութեան և հայկական եկեղեցական ձայնագրութեան 30 րուբ.

ԿՆԻՐ
Վ. ԵՀԱՓԱՌ
Հայրապետի.

Վաւերացեալ Հայրապետական կնքով եւ կոնդակաւ տուեալով ի 24-րդ աւուր Յուլիս ամսոյ 1881--ՌՃԼ Ներկայ Թուականի ընդ համարաւ 272։

Վահրամ Եպիսկ. Մանկոնէ։

ՀՀ Ազգային գրադարան
NL0349195